№ 5 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 11

1906

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 11 № 5

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի: Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՐԵՄԻԱ. ԳԷՈՐԳԵԱՆ

ԳՈՒԼԱՋԵԱՆՑԻ

առևտրական խանութը դեկտեմբերի 1-ից 1905թ-ի ՓՈԽԱԴՐՎԱԾ է Ս. Մանթաշեանցի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազարխանային կից: 4—10

ԴՈԿՏՈՐ

Յ. Յ. ՏԷՐ-ՋԱՆԵԱՆՑ

հիւանդութիւնից առողջացել է և նորից ընդունում է հիւանդներին ինչպէս առաջ:
1—2 (11,13)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասցիները պարլամենտու ընտրութեամբ. Վերջին տեղեկութիւններ. Փոխարքայի դիւանատան հերքումը. Նոր թերթեր. Բագուի ազդը. Արևմալից դէպքերը սխխանում. Փորիսի դատավարութիւնը. Մի կարևոր բացատրութիւն. Նամակ Երևանից. Ներքին լուրեր. Ֆրանսիական նոր նախագահը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՎԿԱՍՑԻՆԵՐԸ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

I

Մեզ բոլորիս հետաքրքրում է այն հարցը թէ արդեօք կովկասցիները մասնակցութիւն պէտք է ունենան ռուսական պարլամենտում հաւասար պետութեան բոլոր միւս ներկայացուցիչների հետ:

Պետերբուրգի կառավարչական բարձր շրջաններում տատանումներ կային Կովկասի վերաբերութեամբ: Կան անձեր, որոնք առարկում էին թէ Կովկասը չափազանց խառնակ վիճակի մէջ է ներկայումս և թէ կովկասցիների մէջ կան շատ տարրեր դեռ չը հասունացած պարլամենտական կեանքի համար:

Բայց դրանք այնպիսի առարկութիւններ են, որոնք չափազանց պայմանական և առաձգական նշանակութիւն ունեն:

Խառնակ դրութիւն:

Եթէ խառնակ դրութիւնը արգելք լինէր, այն ժամանակ բոլոր Ռուսաստանն էլ պէտք է զրկվէր պարլամենտից: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Ռուսաստանի ուրիշ շրջաններում կան տեղեր, որտեղ խառնակ դրութիւնը աւելի պակաս սրութիւն և ուժգնութիւն չունի, քան մեր երկրում: Այդպիսի դրութիւն օրինակ տեղի ունի հարաւային նահանգներում՝ Օդեսայի և Ռոստովի շրջաններում, բալթական նահանգներում, Ուրալում, Սիբիրում և ներքին նահանգների ընդարձակ տարածութիւնների վրա:

Կարելի է բոլորովին հակառակը ասել և պնդել թէ խառնակ վիճակի դէմ մաքառելու ամենահիմնական և ամենաէական միջոցը կարող է լինել հին վարչական սիստեմի վերացումը և պարլամենտական կեանքի հաստատումը: Դժուար չէ նոյնպէս ապացուցանել, որ եթէ պարլամենտական կեանքի բարիքները չը ծաւալվէին պետութեան բոլոր մասերում, այն ժամանակ խառնակ դրութիւնը ոչ միայն կը շարունակէր պահպանել իր գոյութիւնը, այլ և նոր ճիւղաւորութիւններ կը ծնէր և բարդութիւններ առաջ կը բերէր, որոնք կը ստեղծէին աւելի սուր տագնապներ իրականութեան մէջ:

Մենք այնքան շատ ենք վնասվել հին ռէժիմից, մենք այնքան տառապել ու տոչորվել ենք կամայականութիւնից, մեր ձայնը այնքան քիչ է ուշադրութեան արժանացել վարչական շրջանների կողմից և մենք այնքան հեռու ենք դրված եղել մեր սեփական կարիքների քննութեան գործերի կարգադրութեան անհրաժեշտ և պատուաւոր հոգսերից, որ այժմ չենք էլ կարող երևակայել թէ մեզ կարող են զրկել իրաւունքից մասնակցելու պետական կեանքին և մեր երկրի ու մեր ժողովրդի ձայնը հասցնելու համառուսական ազգային ժողովի գիտութեան և քննութեան:

II

Առարկում են, որ մենք հասունացած չենք:

Այո, հասունացած չենք այն մտքով, որ իսկոյն սկսենք իրագործել ամենակատարեալ ծրագիրներ ամենակատարեալ եղանակներով և իսկոյն արտադրել փայլուն արդիւնքներ: Բայց այդպիսի հասունութիւնը ձեռք է բերվում աստիճանաբար և ձեռք է բերվում հէնց նոյն ազատ քաղաքացիական և պարլամենտական կեանքով:

Մենք նոյնքան հասունացած ենք, որքան պետութեան միւս մասերը, մենք նոյնքան, գուցէ և աւելի, հասունացած ենք, քան մի որ և է Բօլգարիա, Յունաստան, Սերբիա, Չերնոգօրիա, որտեղ արդէն տիրում են սահմանադրական կարգեր և պարլամենտական կեանք:

Այնտեղ էլ չը կայ կատարելութիւն, բայց ամեն մի օրը, ամեն մի տարին աւելացնում են նրանց ժողովուրդների ինքնավարչական ընդունակութիւնները և այդ երկիրներից ոչ մէկը չէ էլ կարող հեռաւոր կերպով անգամ հաշտվել ոչ սահմանադրական կարգերի հետ:

Իսկ ինչ են այդ երկիրները:

Ասիական պետութեան նախկին նահանգները, որտեղ տիրում էին ոչ աւելի նպաստաւոր կարգեր, քան մեր երկրում, երբ սա դեռ գտնվում էր պարսկական և Թուրքական գերիշխանութեան տակ: Իսկ մենք մօտ հարիւր տարի է, որ մի որոշ չափով կարողացել ենք օգտվել կուլտուրայի և եւրոպական կարգերի բարիքներից: Եթէ, ուրեմն, Թուրքական նախկին նահանգները կարողացան իւրացնել սահմանադրական կարգեր, այդ աւելի ևս հեշտ կը լինի մեզ աւելի կրթվածներիս և աւելի պատրաստվածներիս համար:

III

Մենք գիտենք, որ կովկասեան ներկայ բարձր իշխանութիւնը դրականապէս պաշտպան է եղել այն գաղափարին, որ Կովկասը բացառութիւն չը կազմէ Ռուսաստանի միւս մասերից և ստանայ իրաւունք մասնակցելու Պետական Դումային, համարելով դա թէ արդարութեան և թէ խելացիութեան մի պահանջ: Պետերբուրգի ղեկավարող շրջանները համաձայնել են սկզբունքով, որ Կովկասը պէտք է մասնակցէ պարլամենտական կեանքին, բայց կասկածներ և առարկութիւններ են ծագել այն բանի մասին, իրագործել արդեօք այդ սկզբունքը այժմ թէ յետաձգել առ ժամանակ:

Պատճառը:

Այն, ինչ որ վերև յիշեցինք, այն է, երկրի խառնակ դրութիւնը:

Կովկասի մասնակցութեան խնդրին յատկացրած մի առանձին խորհրդակցութեան մէջ, որ տեղի ունեցաւ Պետերբուրգում կոմս Սօլսկու նախագահութեամբ, կոմս Վիտտէի մասնակցութեամբ և կովկասեան ներկայացուցիչների ներկայութեամբ, մանրամասն քննվեց հարցը և ստացաւ դրական լուծում:

Կովկասեան ներկայացուցիչները իրանց պատճառաբանութիւններով կարող եղան համոզել, որ զրկել Կովկասը պարլամենտին մասնակցելուց՝ կը լինէր մեծ սխալ: Խորհրդակցութիւնը դրական որոշում կայացրեց և այդպիսով լուծեց նրա առաջ դրած հարցը նպաստաւոր վախճանով:

Կարելի է ցաւել սակայն, որ Անդրկովկասի ներկայացուցիչների թիւը պարլամենտում սահմանափակ է և հնարաւորութիւն չը կայ մեր երկրի գործերին լաւատեղեակ մարդկանց աւելի մեծ բազմութիւն ուղարկելու այնտեղ: Մանաւանդ դա կարևոր է այն պատճառով, որ մեր երկրի թէ տնտեսական և թէ ազգագրական պայմանները չափազանց բազմազան են և անկարելի է պատգամաւորների քիչ թւով կատարեալ կերպով ներկայացնել մեր երկիրը ու մեր կարիքները և նախատեսել նրա բարգաւաճման վերաբերեալ բոլոր խնդիրների մանրամասնութիւնները:

Ինչ վերաբերում է այն ցենզին, որ ընդունված է պատգամաւորի համար, նա աւելի նպաստաւոր է քան այն, որ ընդունված է հիւսիսում. այն է նա հաւասար է 15 ռուբլի զեմսկի տուրքի:

IV

Այժմ գործելու հերթը անցնում է մեզ, կովկասցիներիս:

Պարլամենտը մեզնից պատգամաւորներ է սպասում: Եւ մենք պէտք է տանք այդ պատգամաւորներին այնպէս, ինչպէս պահանջում են մեր երկրի շահերը և կարիքները և պետական կեանքի ընդհանուր բարենորոգման պահանջները:

Շուտով, անկասկած, կը հրատարակվեն Կովկասի ընտրութիւններին վերաբերեալ հրահանգները, որոնցով պէտք է ղեկավարվել ընտրութիւններ կատարելու ժամանակ: Մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին այդ հրահանգների հետ և այժմուանից բաց ենք անում լրագրի էջերը մտքերի փոխանակութեան և զանազան խորհրդածութիւնների համար ընտրողական գործի վերաբերմամբ:

Ա. Քալանթար

ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ

Պէտք է ընտրել և ոչ նշանակել:

Այս պահանջը անում էր հայ ժողովրդի, մամուլի, հասարակական կարծիքի կողմից դեռ այն ժամանակ, երբ Ռուսաստանում ինքնակալական ռէժիմը իր ամբողջ հզօրութեան մէջ էր, երբ ժողովրդական-ընտրական սկզբունքը արհամարված, անգոսնված էր, երբ ժողովուրդը դեռ հնարաւորութիւն և իրաւունք ձեռք չէր բերել պահանջել, որ իր մասնակցութիւնն ևս ընդունվի երկրի կառավարութեան գործի մէջ, երբ, վերջապէս, դեռ գոյութիւն չունէր հոկտեմբերի 17-ի մանիֆեստը:

Պէտք է ընտրել և ոչ նշանակել առաջնորդներին, Սինոդի անդամներին, յաջորդներին, վանահայրերին, կոնսիստորիայի անդամներին, որովհետև այդպէս է պահանջում հայոց եկեղեցու ամբողջ ոգին, ամբողջ ուղղութիւնը, որովհետև այդ եկեղեցին իր հիմնարկութեան օրից շարունակ ղեկավարվել է այդ սկզբունքով, այդ ոգով և միայն մի դար է, որ սկսել է շեղել այդ ուղղութիւնից, շնորհիւ 1836 թ-ի պօլօժենիայի, որ թէև պահպանել է այդ սկզբունքը եկեղեցու պետի՝ կաթողիկոսի և քահանաների վերաբերմամբ, բայց միւս պաշտօնեաների վերաբերմամբ մտցրել է մի փոփոխութիւն, որ բոլորովին հակասում է հայոց եկեղեցու աւանդութեան, պատմութեան և կանօնական իրաւունքին:

Եւ այս ինչ հակասութիւն է. եկեղեցու նուիրապետութեան երկու ծայրագոյն աստիճանների ներկայացուցիչները՝ կաթողիկոսը, և քահանան ընտրվում են ժողովրդից, իսկ միջին տեղը բռնող առաջնորդները, վանահայրերը՝ նշանակվում են: Թէ առաջնորդները նոյնպէս ընտրվում են եղել ժողովրդի ձեռքով և ոչ նշանակվում, դրա մի ուրիշ ապացոյցն ևս այն է, որ Թիւրքիայում թէ առաջնորդ, թէ յաջորդ, թէ կրօնական ժողովի անդամները ընտրվում են և ոչ նշանակվում: Արդ, Թիւրքահայոց սահմանադրութեան հեղինակները, այդ սահմանադրութիւնը խմբագրելիս ղեկավարվել են նաև հայոց եկեղեցու դարաւոր սովորութիւններով և կանօններով և միայն նուիրագործել են, օրինականացրել այդ սովորութիւնը:

Առաջնորդների, յաջորդների և եկեղեցական ուրիշ պատասխանատու պաշտօնեաների ընտրութեան հարցը վաղուց դրված է հրապարակի վրա. այդ պահանջը վաղուց անում է ժողովուրդը, բայց մինչև այսօր մենք չը տեսանք ոչ մի լուրջ քայլ հոգևոր իշխանութեան կողմից իրագործել մի պահանջ, որ անյետաձգելի է, կենսական է ազգային ժողովրդական ու եկեղեցական շահերի տեսակէտից: Հին կարգը, դատապարտված, վնասակար, անպէտք կարգը շարունակվում է միայն գործադրութեան մէջ:

Եւ հետևանքները հասկանալի են: Շնորհիւ այդ կարգի, բիւրօկրատիական փտասակար ոգին մտել և բուն է դրել իր ժողովրդականութեամբ պարծեցող հայ եկեղեցու մէջ: Շնորհիւ այդ կարգի, առաջնորդական աթոռների վրա բազմել և ահագին թեմերի ժողովրդի հոգևոր հովւութեան գաւազանը իրանց ձեռքն են առել բիւրօկրատիականութեամբ տոգորված հոգևորականներ: Շնորհիւ այդ կարգի, Սինոդի, կօնսիստօրիաների անդամութեան պաշտօնները ընկնում են անարժանների ձեռքը, դառնում են լոկ անձնական շահերի աղբիւր և իրանք, այդ հաստատութիւնները՝ Սինոդը և կօնսիստօրիաները վերածվելով մեռած, ժողովրդի հետ ոչ մի բարոյական առնչութիւն չունեցող հաստատութիւնների, անուցանում են միայն պրոտոկոլներ, ասպարէզ են դառնում բազմաթիւ զեղծումների, ենթարկված չը լինելով ոչ մի իրական կօնտրօլի, ժողովրդական կօնտրօլի: Իսկ կօնտրօլը մասամբ իրագործված կը լինի, եթէ պաշտօնեաները ընտրված կը լինեն ժողովրդի ձեռքով և ոչ նշանակված: Շնորհիւ այդ կարգի, շատ արժանաւոր հոգևորականներ այսօր կամ մնացել են անգործ, անպաշտօն, զրկված հնարաւորութիւնից գործադրել իրանց ոյժերը, ուսումը յօգուտ ժողովրդի, կամ ուղարկվել են այնպիսի տեղեր, ուր ոչինչ չը կայ գործելու, կամ ժողովուրդ չը կայ հովւելու:

Մեր կարծիքով, ընտրական սկզբունքի գործադրութիւնը և առաջնորդների, Սինոդի անդամների վերաբերմամբ, երբեք չէ կարող հակասել պօլօժենիայի տրամադրութիւններին, որովհետև առաջին՝ պօլօժենիան ճանաչում է, իբրև ընդհանուր սկզբունք, որ հայոց եկեղեցին կառավարվում է իր աւանդական կանօններով, երկրորդ՝ ընտրական սկզբունքը նա ընդունում է կաթողիկոսի և քահանաների վերաբերմամբ և, երրորդ՝ պօլօժենիան պահանջում է միայն, որ առաջնորդական և սինօդական պաշտօնների համար կառավարութեան հաստատութեան ներկայացվեն կանդիդատներ: Արդ, ով է արգելում, որ հաստատութեան առաջարկվող այդ կանդիդատները ընտրված լինեն ժողովրդի ձեռքով:

Ազգի և եկեղեցու կենսական շահերը պահանջում են, որ թէ առաջնորդները, թէ յաջորդները, թէ Սինոդի և թէ կօնսիստօրիաների անդամները ընտրվեն ժողովրդի քուէարկութեամբ և ոչ նշանակվեն: Ժամանակ է, որ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը լրացումն տայ այդ պահանջին և լրացումն տայ անմիջապէս, եթէ չէ կամենում մի վէճ փորել իր և ժողովրդի մէջ: Այդ պահանջի իրագործումը անյետաձգելի է այժմ մանաւանդ, երբ եկեղեցական գոյքերը և դրամագլուխները վերադարձնվում են և պէտք է, որ նրանց մատակարարութեան և կառավարութեան գործը այլ ևս չը գտնվի լոկ հոգևորականութեան ձեռքում:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ Թիֆլիսում լուրեր տարածվեցին, որ Բագւում սկսվել է հայ-թուրքական ընդհարում: Մենք հեռագրական տեղեկութիւն պահանջեցինք և պատասխան ստացանք, որ Բագուն հանգիստ է:

Մենք տեսնվեցինք և զանազան անձերի հետ, որոնք եկել են Բագուից և իմացանք, որ Բագւում վերջին շաբաթների ընթացքում տիրում է խաղաղութիւն: Հայ-թուրքական յարաբերութիւնները արտաքուստ բաւարար են, բայց դեռ այնքան չեն բարւոքվել, որ վստահութիւն լինի երկար ժամանակվայ համար: Քաղաքի հայկական մասում թուրքերը ազատ երթևեկում են, իսկ հայերը փոքր ի շատ է զգուշանում են թուրքական թաղերի խորքերը թափանցելու:

Նոր-տարվայ գիշերը կարող էր վտանգի առիթ լինել, բայց բարեբաղդաբար անցաւ առանց բարդութիւնների և վաղեմի ընդունված սովորութեան համաձայն սկսեցին ատրճանակներ պարպել հին տարին քշելու համար: Սակայն ատրճանակի հարուածները սկսեցին չափազանց յաճախ կրկնվել և բնականաբար յուզմունք պատճառել:

Ազգաբնակութիւնը ինքն էլ մեծ գայրոյթ ունէր հին տարվայ դէմ և ուրախ էր քշել հեռացնել նրան Բագուի ասպարէզից, ուր այնքան դժբաղդ անցքեր կատարվեցին այդ հին տարում, բայց ատրճանակի պայթիւնները ամենևին չէին նպաստում հնի հալածելուն, այլ յիշեցնում էին նրա սարսափելի ուրուականը:

Բագուի թուրքերին փոքր էլ յուզմունք պատճառեցին Շուշու շրջանի մասին տարածված մի քանի հեռագիրներ, բայց նրանց ազդեցիկ և խելացի մասին աջողվեց հանգստացնել յուզված մտքերը:

Ջրօրհնեքի օրվայ համար քաղաքում տարածված էին վրդովմունք առաջացնող լուրեր և շատերը զգուշութիւններ էին ձեռք առել վտանգից ազատվելու, բայց 5-ի և թէ 6-ի օրերը անցան խաղաղ: Զօրքերի մասերը շրջում էին քաղաքում: Աւետիս ման գալը այս տարի թողնված էր դժբաղդ թիւրիմացութիւններից ազատ լինելու նպատակով:

Քաղաքիս առևտրական-արդիւնաբերական կեանքը սկսում է վերականգնել: Պետութեան կողմից ցոյց տուած դրամական աջակցութիւնը, որ արդէն սկսել է իրականանալ, յոյսեր է ներշնչել մարդկանց, որ դադարած գործերը նորից կեանք կը ստանան:

Երկաթուղու հաղորդակցութիւնը թէ հիւսիսի և թէ Անդրկովկասի միւս մասերի հետ արդէն վերականգնել է:

—

Շուշուց, յունվարի 4-ից, մեզ գրում են.

Խանքէնդ-աւանի կոզակների կոմանդիրը զինաթափ անելով տեղական հայերին՝ խլել է վերջիններից 25 հրացան: Կոմանդիրի այդ օրինակ վարմունքը, անկասկած, կարող է խրախուսել թուրքերին երկրորդ անգամ յարձակում գործելու Խանքէնդ-աւանի՝ ներկայումս անզէն հայերի վրա: Հայերին մեծ գայրոյթ է պատճառում այն տխուր հանգամանքը, որ ադմինիստրացիան թէ անգործունէութիւն է ցոյց տալիս թուրքերի վայրագութիւնների դէմ և թէ միաժամանակ՝ թոյլ է տալիս զինաթափ անելու ինքնապաշտպանութեան համար զինված հայերին:

—

Ռուսական հեռագրական գործակալութիւնը չէ դադարեցնում իր շահատակութիւնները սուտ լուրեր հնարելու ասպարէզին մէջ: Նա Աղդամ գիւղից հետևեալ հեռագիրն է ուղարկել յունվարի 5-ին,

«Յունվարի 2-ին, հայերը յարձակվեցին «Կարափիրիսում» վրա, որ մուսուլմանների՝ սրբատեղին է, բայց յետ մղվեցին: Յունվարի 3-ին նրանք վերադարձան մեծ ամբոխով և մի քանի զալպ ու թնդանօթային հարուածներ տուեցին: Ի պաշտպանութիւն սրբավայրի և մուսուլմանների վեր կացան մօտակայ գիւղերը: Սկսվեց կռիւ, որ տևեց 8 ժամ: Հայերը փախան, թողնելով սպանված և վիրաւոր յիսուն հոգուց աւելի: Աղդամ եկան հետևակ երկու վաշտ: Բնակիչները յանձնեցին զէնքը: Այսօր պահակախմբի ուղեկցութեամբ կենսական մթերքների մեծ տրանսպորտ է տարվում Շուշու սոված մուսուլմանների համար: Սպասվում է փոխարքայից կազմակերպված զօրախումբը: Մուսուլմանները յուզվում են»:

—

Ստացանք հետևեալ հեռագիրները.

Շուշի, 8 յունվ. երեկոյեան ժամը 9 և 25 ր.

«Յունվ 6-ի առաւօտեան 2000 հոգի կազմակերպված Թուրք մասսան, զինված մօսինի հրացաններով, ուղեկից ունենալով Պարսկաստանից անցած քրդական հազար հոգուց բաղկացած հեծելազունդը, կեղծ ցոյց սարքելով Խոջամուրթի մօտ, միաժամանակ խուժեց Վարազաբոյն (Աբանդամին), Նախիջևանիկ և Փիրջամալ հայ գիւղերի վրա: Ճակատամարտը տևեց 6 ժամ: Թուրքերը մօտեցան Վարազաբոյնին 200 քայլ տարածութեան վրա, բայց Դաշնակցութեան կազմակերպված գիւղացիական պահակների շնորհիւ՝ աջողվեց յետ մղել յարձակումը—մեծ կորուստ պատճառելով Թուրքերին: Թուրքական այն ֆուրգօնները, որ բերել էին հեծելազնդի հետից, ինչպէս երևում է թալանած իրերը տանելու համար, պէտք եկան Թուրքերին տանելու իրանց սպանվածներին և վիրաւորներին: Հայերից սպանված են 8 տղամարդ, 4 կին և վիրաւորված են 9 հոգի:

Այդպիսով յետ մղվեց 30-րդ յարձակումը յամառ թշնամու, որը ձգտում է խլել Ղարաբաղի բանալին:

Ադմինիստրացիան անգործ էր մնում: Ժամանեց Օզէրօվսկին, իջևանեց թուրքերի մօտ, հասցրեց նրանց պաշար և մեկնեց նոր պաշար բերելու Թուրքերի համար:

Սպասում ենք Գօլօշչապօվին:

Զանգեզուրի գաւառում Թուրքերը մտադիր են կենտրոնացնել ահագին ոյժեր: Յատուկ Թուրք սուրհանդակներից խլված նամակներից և խաղաղ Թուրքերի հաղորդած տեղեկութիւնների համաձայն այդ շարժումների գլխաւորներն են Շուշու գաւառում—Նաջաֆ-Ղուլի-աղան, Զանգեզուրի գաւառում—Իբրահիմ-բէկը, Ջիբրայիլում—Հիւսէին-բէկը: Դրանք լարում են բոլոր ջանքերը ոչնչացնելու հայ ազգաբնակութիւնը:

Զանգեզուրում մի կռւի մէջ հերոսական մահով մեռաւ Դաշնակցութեան առաջնակարգ մարտնչողներից մէկը—Ստեփան Ստեփանեանը: Անմահ թող լինի հայրենիքի համար փառաւոր մարտնչողի և նրա 4 զինուորների յիշատակը, փառք այն երկրին, որը ծնում է այդպիսի հերոսներ:

—

Գորիս, 9 յունվարի, ժամը 11-ին ցերեկվայ

«Գաւառում անհանգիստ է: Դեկտ. 17-ին Ջիջիմլիցիները քշեցին տարան տօղեցիների տաւարը. վերջիններս ոչնչացրին երկու Ջիջիմլուեցի, սպանեցին 15 Թուրք: Հաջիլարցիները քշեցին տարան 100 գլուխ տաւար խողնավարցիներից և մի մարդ էլ գերեցին: Խնածախցիները յարձակվեցին Հաջիլարի վրա. հայերից վիրաւորված են 7 հոգի, Թուրքերից սպանված են 5 մարդ: Դեկտ. 21-ին Թուրքերը շրջապատեցին Գերէնդուրը, բայց ստիպված եղան պաշարումը վերջնել: Պօստային ճանապարհը կտրել են Թուրքերը, հեռագիրը նոյնպէս: Յարձակում գործեցին Ղալադարասու վրա, սակայն Թուրքերի համար անաջող ելք ունեցաւ:

Դեկտ. 23-ին ադանդեցիներն սպանեցին մի զօրինեցի, որը ուղեկցում էր զօրքերի գոյքը, կողոպտեցին կազակների բոլոր գոյքը: Կազակները փախան, բայց հարիւրապետը վրա հասաւ, կարգը վերականգնեց և պատժեց ադանդեցիներին, բայց վերջիններս կարողացան ծածկել կազակների համար փոխադրվող փամփուշտները, որ արդէն խլել էին:

Դեկտ. 25-ին ադանդեցիները յարձակվեցին Ճամբորդ հայերի վրա, սպանեցին Ստեփանեանցին, 20 հոգի էլ հետը. տեղի ունեցաւ կատաղի ընդհարում. ադանդեցիներից սպանվել են 70 հոգի, վիրաւորված են շատերը, այրվել են 30 տուն:

Դարաբասցիները լսելով հայ հերոս Ստեփանեանի սպանվելու լուրը, յարձակվեցին իրանց համագիւղացի հայերի վրա, սպանեցին տէր Մկրտիչ քահանային և 4 հայերի. քահանայի գլուխն ուղարկել են մի ազդեցիկ Թուրքի նուէր: Ստեփանեանի գլուխը ման են ածում Թուրքերը Ղափանում: Հայերը կատաղած յարձակվեցին դարաբասցիների վրա և սպանեցին 278 հոգի Թուրքեր, կողոպտեցին ու աւերեցին գիւղը: Յետոյ գնացին Քիւրդլար գիւղի վրա, սպանեցին 120 Թուրք:

Սիսիանում անհանգստութիւն է տիրում:

Տանձաւէրի բէկերը յուզվեցին: Նրանք հաւաքեցին 400 մարդ, յունվարի 4-ին յարձակվեցին Երիցաթումբ հայ գիւղի վրա. յարձակումը վերջացաւ խայտառակ անաջողութեամբ: Սպանված է աչքթադեցի յայտնի փախստական Ղարան, 4 Թուրքեր հետը միասին: Յարձակվողների մէջ հայերը ճանաչել են շատ յայտնի բէկերի:

Ղափանում յուզմունք է տիրում: Հանգամանքները բարդանում են: Հայերը շրջապատված են բազմաթիւ Թուրքերով և կտրված են ամեն կողմից:

Զօրքերը չեն հնազանդվում: Մթերքները սաստիկ թանկացել են:

Անհրաժեշտ է միջնորդել բարձրագոյն իշխանութեանը, որ թոյլատրվի հայերին զինվել:

Գարնանը սպասվում են խոշոր ընդհարումներ»: Հ. Մ.

—

Շուշուց, յունվարի 10-ին ստացանք հետևեալ հեռագիրը:

«Ազգաբնակութիւնը և ես բազմիցս դիմում էինք գեներալ-նահանգապետին և փոխարքային, նկարագրում էինք բոլոր դէպքերը, նրանց ուշադրութիւնն էինք հրաւիրում քաղաքի և ամբողջ Ղարաբաղի սարսափելի դրութեան վրա: Այս օրերս ես մինչև անգամ մի ընդարձակ հեռագրով դիմեցի Թագաւոր Կայսրին: Իշխանութիւնների բոլոր կարգադրութիւնները ի նպաստ Թուրքերի են լինում: Զօրքերի ստարշինա Օզէրօվսկի, որին յանձնարարված է զօրքերով և արտիլէրիայով մթերքներ հասցնել հայերի և Թուրքերի համար, դիմեց ինձ Աղդամից, յունվարի 3-ին մի հեռագրով, խնդրեց իմ կարգադրութիւնը, որպէս զի Ասկարանը պաշտպանող հայերը վերադարձնեն Թուրքական կողոպտված տրանսպորտի արժողութիւնը: Ես պատասխանեցի, որ Թուրքերը վերջին չորս ամիսների ընթացքում անընդհատ կողոպտում էին հայերի միլիոններ արժեցող ապրանքները և որ արդարութիւնը և անկողմնապահութիւնը պահանջում են վերադարձնել հայերից կողոպտածը կամ նրա արժողութիւնը: Օզէրօվսկի, զօրքերի պաշտպանութեամբ, Թուրքերի համար ահագին քանակութեամբ մթերքներ բերեց, մինչև անգամ Շուշիքէնդցի հայերից Թուրքերի քշած տաւարը, կանգ առաւ Թուրքական մասում և չը նայելով հայերի հրաւէրին՝ շնորհ բերել թեմական առաջնորդի տունը բանակցութիւնների համար, նա այդ բանը արհամարհանքով մերժեց և Աղդամ վերադարձաւ Թուրքական տրանսպորտը նորից բերելու համար: Թուրքերը անընդհատ յարձակում են գործում այն կէտերի վրա, ուր հայ ազգաբնակութիւնը թոյլ է կամ ոյժ չունի նրանց դիմադրելու, իսկ ադմինիստրացիան այդպիսի դէպքերում հայերին օգնութիւն չէ հասցնում: Իսկ եթէ հայերը, դիմադրութիւն ցոյց տալով յարձակում գործող Թուրքերին, հալածում են նրանց, այն ժամանակ վերջիններին զօրքերը և կազակներն են օգնում: Այդպիսի ակներև անարդարութեան դէպքում ես ադմինիստրացիան այնու ամենայնիւ հայերին է տեսնում: Հայերը գրաւած ունեն Ասկարանի դիրքերը միմիայն նրա համար, որպէս զի արգելեն զինված Թուրքերին ներս խուժել քաղաքը և աւերել գիւղերը: Հայերը միայն զօրքերի պաշտօնն են կատարում և նպատակ ունեն պաշտպանել քաղաքը և ամբողջ գաւառը, բայց տեղական ադմինիստրացիան ամեն կերպ աշխատում է ցրել Ասկարանեան դիրքերից հայերին, որոնք ամեն տեսակ տառապանքներ են կրում, մինչդեռ ոչ ոք չէ արգելում հազարաւոր զինաւորված Թուրքերին խմբվել Աղդամում: Ասկարանով Օզէրօվսկու անցնելուց մի քանի րոպէ յետոյ մի քանի հազար զինաւորված Թուրքեր արշաւեցինոյն տեղով քաղաքը ներս խուժելու համար, սակայն հայերը նրանց նկատեցին շտապով, դիրքեր գրաւեցին և մի քանի ժամ տևող կռւից յետոյ յետ մղեցին նրանց։ Մի խօսքով մեծ հալածում է անարդարութիւնը։ Սարսափելի է քաղաքի և ամբողջ նահանգի դրութիւնը։ Ամէն օր սպասվում են յարձակումներ։ Սովն սկսվեց։ Ամբողջ քաղաքը խաւարի մէջն է ընկղմված։ Կէրօսինը ծախվում էր ֆունտը յիսուն կոպէկով, բայց այժմ ամենևին չէ ճարվում։ Դժուարութեամբ է շաքար ճարվում, ֆունտը 60 կոպէկով։ Հաց ամենևին չը կայ։ Գործ է ածվում պրօսօ։ Թուրքերը առատութեամբ մթերքներ ստացան և երևում է էլի կը ստանան, իսկ հայերը չարժանացան այդ շնորհին։ Սովը սկսվեց. ո՞վ կը փրկէ քաղաքը։ Ըստ կարելոյն շուտափոյթ օգնութիւն են հայցում։

Թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոս

«Баку» լրագրի մէջ կարդում ենք.

«Քաղաքում տարածված Շուշու մասին յուզումնալից լուրերի պատճառով, քաղաքագլխի պաշտօնակատար Քեամիլ-բէկ Սաֆար-Ալիևը հեռագիրներ ուղարկեց Փոխարքային՝ Թիֆլիս և գեներալ Ֆլէյշերին՝ Գանձակ, խնդրելով միջոցներ ձեռք առնել դադարեցնելու անկարգութիւնները և պաշտպանելու խաղաղ ժողովուրդը բռնութիւններից Շուշու գաւառում։ Այդ հեռագիրներին հետևեալ պատասխանները ստացվեցին. 1) Փոխարքայի դիւանատան կառավարիչ Պետերսօնից. «Փոխարքայի յանձնարարութեամբ հաղորդում եմ, որ կարգադրութիւններ են արված միջոցներ ձեռք առնել Շուշու մուսուլմաններին պաշտպանելու յարձակումներից»։ 2) Գեներալ Ֆլէյշերից. «Դրութիւնը Շուշում լաւացել է։ Շուշու և Զանգեզուրի գաւառները ուղարկված են զօրքեր արտիլլէրիայով գեներալ Գոլօշչապօվի հրամանատարութեամբ, անկարգութիւնները դադարեցնելու համար»։

Գանձակում հաշտութեան պայման կապելուց յետոյ Թուրքերը բռնել են երկու հայերի, որոնց վիճակի մասին մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն չը կայ. ենթադրում են, որ նրանք սպանված են։ Մի քանի օր անցնելուց յետոյ, զինված Թուրքերի մի խումբ փորձեց ներս խուժել հայերի մասը՝ կրակ բանալով այդ մասում գտնվող պահակ զօրքի վրա, սակայն Թնդանօթի հարուածներով կարելի եղաւ ցրվել Թուրքերին։ Վերջիններս հաւատացնում են, որ դրանք ուխտաւորներ են եղել։ Զարմանալու է, որ ուխտաւորները առանց որ և է պատճառի կրակ են բաց անում զօրքի վրա, և որ նրանք ուխտ անելու են գալիս ոչ թէ այդ տօնի օրը—ուրբաթ, այլ թէ հետևեալ օրը—շաբաթ։

Այսօր հիւանդանոցի վերակացու Գուրգէնբէկովը մտնում է պօստային բաժանմունքը, որը գտնվում է համարեա թէ Թուրքերի և հայերի սահմանին մօտ և ստանում է 50 րուբլի և այդտեղից դուրս գալուց՝ նրա վրա յարձակվում են զինված Թուրքերը, ուժով նստացնում են փակ կառքի մէջ և տանում։ Այդ բանը նկատում է իր պատուհանից տիկին Արղութեօնովան և հարայ-հրոց է բարձրացնում, յայտնում են գեներալ-նահանգապետին, որը Թուրքերից պահանջում է անյապաղ վերադարձնել Գուրգէնբէկովին։ Այդ դէպքը տեղի է ունենում առաւօտեան ժամը 10-ին։ Ճաշից յետոյ ժամը 3-ին, Թուրքերը գտնում են Գուրգէնբէկովին և բերում։ Գուրգէնբէկովը պատմում է, որ Թուրքերը նստեցնելով իրան կառքի մէջ, նախ Թալանեցին իրան, հանելով շորերը նոյն իսկ, այնուհետև եափնջիով ծածկելով իրան, որպէս զի ինքը չը կարողանայ իմանալ թէ ուր են տանում իրան, քաղաքից դուրս են տանում, կառքից վայր բերում և քարշ տալիս մի ինչ որ այգի, պատրաստ ունենալով Թուրքերը իրանց ձեռքում պատեանից հանած խանջալը և մի հրացան՝ փողը ուղղած Գուրգէնբէկովին։ «Ես, պատմում է Գուրգէնբէկովը, հակառակում էի գնալ, բռնելով ծառերից, բայց Թուրքերը ուժով քարշ տուին ինձ մի մեծ ծառի մօտ և պատրաստվում էին ինձ սպանելու, երբ յանկարծ, լսվեց հեռուից մի գոռացող ձայն, որն ասաց.—այդ բանը մի՛ անէք, սպասեցէ՛ք, մի՛ սպանէք։ Ես յետ նայեցի և տեսայ Րուստամ-բէկին, նահանգական վարչութեան Թարգմանին, որը մօտեցաւ մեզ, մի կողմ տարաւ ինձ բռնող Թուրքերին և նրանց հետ երկար խօսակցութիւնից յետոյ, ինձ նորից կառք նստեցրին և բերին մի ինչ որ տուն, որտեղ կային բաւական սպառազինված Թուրքեր. այդտեղ ինձ հանգստացնում էին, որ ինձ չեն սպանի։ Քիչ ժամանակից յետոյ ինձ նորից դուրս տարան այդտեղից և ձգեցին մի ինչ որ ախոռատան մէջ, մի ժամից յետոյ այդտեղից էլ հանելով, տարան այժմ էլ մի ուրիշ տուն, որտեղ ինձ տուին, որտեղից մի ժամից յետոյ ինձ հիւրասիրեցին թէյով։ Այդ ժամանակ այդտեղ եկաւ Ալէքպէր-բէկ Րաֆիբէկովը, որը համոզում էր Թուրքերին ինձ չը սպանել, հաւատացնելով նրանց, որ քաղաքում արդէն գիտեն այդ անցքի մասին և որ դրա հետևանքը կարող է շատ սպանալից լինել։ Այդ ժամանակ Թուրքերը արձակեցին ինձ և Րաֆիբէկովը բերեց ինձ գեներալ-նահանգապետի մօտ»։

Հայերը զայրացած լինելով նրա համար, որ Թուրքերը խախտում են հաշտութիւնը, և նամանաւանդ, երբ իմացան Գուրգէնբէկովի հետ պատահած դէպքը, միանգամայն գժվեցին և մեծ խմբով ուղղվեցին դէպի մեժեւոյ ուչաստոկը, որտեղ ծառայում են մի քանի Թուրքեր, վերջիններիս բռնելու նպատակով, բայց Կորիւն վարդապետի Թախանձանքները և կօզակների գալը ցրվեցին նրանց, և Գուրգէնբէկովի վերադառնալն էլ մասամբ հանգստացրեց հայերին։

Հաշտութեան պայմանները խախտող այդօրինակ յանցաւորներին պէտք է գտնել և խիստ կերպով պատժել, այլապէս հանգստութիւնը վերականգնել անկարելի կը լինի։ Յանցաւորներին գտնելը շատ և շատ հեշտ է։

Երէկ, Թիֆլիսում լուր տարածվեց, որ Գանձակում բռնկվել է հրդեհ և սկսել է հրացանաձգութիւն։ Մենք ժողովեցինք տեղեկութիւններ և իմացանք, որ այրվել է Թուրքի պատկանող մի կաշւէ գործարան։ Թուրքերը ընդհարման սկզբում, դիմել են հրացանաձգութեան, բայց զօրքերը միջամտել են և վերականգնել խաղաղութիւնը։

Գանձակի կայարանից մեզ հեռագրում են, որ յունվարի 9-ի երեկոյեան քաղաքում տեղի է ունեցել սաստիկ զօրեղ հրացանաձգութիւն, որի հետևանքը, պատճառներն ու չափը դեռ յայտնի չեն։ Սպասում ենք մանրամասնութիւնների։

«Ապստամբութիւնը Կովկասում»։ Այս վերնագրով անգլիական լրագիրներում տպված է Րէյտէրի գործակալութեան հետևեալ հեռագիրը Պետերբուրգից, յունվարի 8 (ն. տ.) թւով։

«Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը» բացարձակապէս հեղինակաւոր աղբիւրից առնելով հաղորդում է, որ արտասահմանի լրագիրներին հեռագրված այն լուրը՝ իբր թէ Կովկասը բոլորովին անջատվել է կայսրութիւնից և այնտեղ բացարձակ ապստամբութիւն տեղի ունի, ճիշտ չէ։ Իրերի դրութիւնը Կովկասում այն է, ինչ որ էր մի քանի ամիս առաջ. յարաբերութիւնը Կովկասի հետ պահպանվում է, թէև և դժուարութեամբ։ Ինչ որ մի քանի տարի առաջ ասիական Թիւրքիայում «հայկական կոտորածներ» անուան տակ պատահեց, նոյնը կրկնվում է այժմ Կովկասում։ Ռուսաստանն այն ժամանակ վեհանձնօրէն ապաստան տուեց բազմաթիւ հայ փախստականների։ Ահա այս հայերն այժմ իրանց յեղափոխական կազմակերպութիւնները և հակապետական շարժումը մտցնում են Կովկաս, անկարգութիւններ են առաջացնում և մահմեդականներին իրանց դէմ յարուցանում, ճիշտ այնպէս, ինչպէս եղաւ Թիւրքիայում։ Այս է շարժառիթը այն կոտորածների, որոնք տեղի ունեցան Կովկասի զանազան գաւառներում։ Կառավարութիւնը եռանդուն միջոցներ է ձեռք առնում այս շարժման դէմ կռւելու համար»։

«Բացարձակապէս հեղինակաւոր աղբիւրից առնված» այս տեղեկութիւնը ցոյց է տալիս, թէ ինչ հայեացք ունեն Պետերբուրգի պետական շրջանները Կովկասի հայ-Թուրքական անկարգութիւնների վրա և ուր են որոնում նրա աղբիւրը… Արդեօք Թիֆլիսից չէ՞ ներշնչված բացատրութիւնը։

Ս.

Կվիրիլ, յունվարի 9-ին

Հեռագրական հաղորդակցութիւնը և ճանապարհը կարգի են բերված. Բաթումի կողմի ճանապարհը ուղղված է մինչև Նօտանեբի, իսկ հեռագրատունը՝ մինչև Լանչխուտի։ Տկվիբուլիի ճիւղի վրա քարերի կուտակումն է, Չիաթուրիի ճիւղի վրա հեռագրական հաղորդակցութիւն չկայ. հեռագրական շարժումը անկախ հանգամանքների պատճառով, առ այժմս չի բացված։

Սօլովեօվ

Ազամետ, յունվարի 9-ին

Վաղը առաւօտեան 10 ժամին ուղեւորվում ենք զօրամասով, փոխ գնդապետ Չիխօվանիի հետ, բաղկացած 2 Երևանեան գնդաձիգներից, Թնդանօթներից և մի հարիւրեակ կօզակներից. Ինժեներ Լօխվիցկին գնում է ինձ հետ։

Փոխ-գնդապետ Կրիլով

Ամսի 9-ից՝ Թիֆլիսից մինչև Ռիօն պօստ. գնացք № 3-ը և ամսի 10-ից Ռիօնից մինչև Թիֆլիս գնացք № 4-ը կը սկսեն անդադար երթևեկել։

Ամսի 10-ից Բօրժօմից մինչև Բօրժօմի պարկը, Միխայլովից մինչև Սուրամ և հակառակ կողմը, Շօրապանից մինչև Սաչխերի և հակառակ կողմը նշանակվում են գնացքներ. ամսի 10-ից ամեն օրվայ երթևեկութիւն կը սկսվի։

Կվիրիլ, յունվարի 9-ին։

Կայարանի մօտ եղած բոլոր խանութները այրվում են. հրդեհը չէ սպառնում կայարանի շինութեան, մարդաբնակ տներին և գնացքներին։

Իվանենկօ

Քութայիս, յունվարի 8-ին։

Առաջարկում եմ շուտով կազմակերպել բանւորական գնացք մթերքներով և ժողովրդի հետ միասին և շտապով դուրս գալ Սամտրեդի—Բաթումի մասի վրա ճանապարհը կարգի բերելու. Նատանեբի—Կօբուլէթի ճանապարհը քանդված է և մէկ կամուրջը փչացած։

Գնդապետ Նէյգեբաուէր

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԴԻՒԱՆԱՏԱՆ ՀԵՐՔՈՒՄԸ

«Нов. Обоз.» լրագրի 5-րդ համարում իբրև լուր տպված էր Բեռլինի գերմանական «Berl. Tageb.» Թերթից քաղված մի յօդուած, որի մէջ ասված է թէ «գործերի վիճակը Կովկասում անհամեմատ աւելի վատ է, քան կարելի է եզրակացնել պաշտօնական տեղեկութիւններից։ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով իր վերջին զեկուցման մէջ կայսրին ասել է, թէ իր՝ դրութիւնը անտանելի է։ Նա շրջապատված է դաւաճաններով. նրա ամեն մի խօսքը, որ արտասանում է իր կաբինետում, մի քանի ժամից յետոյ արդէն յայտնի է յեղափոխականներին։ Մի քանի նահանգապետներ նոյն իսկ անթաքոյս են, բոլոր ճանապարհները ապստամբների ձեռքին է, ուստի Փոխարքան խնդրում է շուտով ուղարկել երկու զօրամարմին»։

Այժմ Փոխարքայի դիւանատունը ուղարկել է բոլոր լրագիրներին, ինչպէս և մեր լրագրին հետևեալ պաշտօնական հերքումը։

«Нов. Обоз.» լրագրի № 5-ում, այս տարվայ յունվարի 9-ից, տեղական քրօնիկօնի բաժնում զետեղված է մի նկատողութիւն, հիմնված «Berl. Tageb.» լրագրի տեղեկութիւնների վրա այն մասին, թէ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը իր վերջին զեկուցման մէջ ասում է, որ նրա դրութիւնը անտանելի է, որ նա շրջապատված է դաւաճաններով, որ պահանջել է Կովկաս ուղարկել երկու զօրամարմին և այլն—այս բոլորը ծայրից ծայր հնարովի է»։

ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

Նոր թերթեր, լրագիրներ՝ հայերէն, ռուսերէն, Թուրքերէն հետզհետէ դուրս են գալիս մեծ արագութեամբ։ Թիֆլիսում հրատարակվեց յունվարի 6-ին «Ընկեր» անունով հայերէն մի նոր շաբաթաթերթ, Սեդրակ Թառայեանցի խմբագրութեամբ և հրատարակութեամբ։ Թողնելով կարծիք յայտնելը այդ նոր հանդէսի մասին, մինչև որ կը հրատարակվեն մի քանի համարներ և հանդէսի ֆիզիօնոմիան կը պարզվի վերջնականապէս, առ այժմ հարկաւոր ենք համարում ասել, որ պ. Թառայեանցը ցանկանում է ընթանալ այն շաւղով, որ բռնել էին Ս. Նազարեանց, Գ. Արծրունի։

Աջողութիւն ենք ցանկանում «Ընկերին» և փափագում, որ նա հասնէ իր նպատակին։

Յունվարի 8-ին հրատարակվեց «Հովիւ» շաբաթաթերթը, որ յայտնում է թէ պէտք է ունենայ հոգևոր-բարոյական, պատմական, հասարակական և մանկավարժական ուղղութիւն. խմբագիր-հրատարակիչն է Եզնիկ ա. ք. Երզընկեան։ Ինչպէս երևում է, գլխաւոր աշխատակիցները պէտք է լինեն Արսէն վ. Ղլտճեան, Բենիկ վարդապետ և Գրիգորիս քահանայ Երզընկեան։ Շաբաթաթերթը յայտնում է, որ նա չը պէտք է զբաղվի դաւանաբանական հարցերով, այլ եկեղեցական դասի կազմակերպութեան բարեփոխութեան հարցերով։ Ապագան ցոյց կը տայ, թէ նոր շաբաթաթերթը որքան ձեռնհաս կը լինի իրագործել այդ նպատակը։

Շուտով պէտք է լոյս տեսնէ և «Յառաջ» լրագիրը, որ դեկտեմբեր ամսում հրատարակեց միայն մի քանի փորձնական համարներ, իբրև լուր լրատու։

Բագւում յունվարի 1-ից սկսել է լոյս տեսնել հայ բողոքականների հովիւ պաստոր Թումաեանի հրատարակութեամբ և խմբագրութեամբ մի նոր հոգևոր-բարոյական շաբաթաթերթ «Կիրակնօրեայ Թերթ» անունով։ Յունվարի 1-ից Բագւում հրատարակվել են 7 ամենօրեայ լրագիրներ, որոնցից 5-ը ռուսերէն և 2-ը Թուրքերէն, այն է «Баку», «Каспій», «Кавказское Слово», «Извѣстія совѣта рабочихъ Депутатовъ», «Якорь» և Թուրքերէն «Իրշադ» ու «Հայաթ»։ Բացի դրանից՝ ուսուցիչ Ֆրանչեսկօյին Թոյլատրված է հրատարակել «Бакинская Жизнь» անունով մի նոր լրագիր։

ԲԱԳՒԻ Հ. Յ. Դ. ԿԵՆԴՐ. ԿՈՄԻՏԷՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ Է ՀԵՏԵՒԵԱԼ ԱԶԴԸ

«Քանիցս ազդարարել ենք տեղական հայ հասարակութեան, որ առանց կարգադրութեան իզուր չարձակվեն գնդակներ։

Տարաբաղդաբար դեկտեմբերի 31-ի երեկոյեան դարձեալ բազմաթիւ հրացաններ պարպվեցան բոլորովին անմիտ և ապարդիւն։

Մենք անմիջապէս միջոցներ ձեռք առանք դադարեցնել տալու այդ հրաձգութիւնները հայերի կողմից և երեսունի չափ անձանց զինաթափ անել տուինք։

Մեր քննութիւնը ցոյց տուեց, որ ժողովրդի անդորրութիւնը վրդովող այդ անկարգութիւնը անհասների կողմից էր կատարվում, մի զինւոր միայն համարձակվել էր մասնակցել այդ անկարգութեան, որ և զինաթափ անվելով՝ պատժվեց։

Սրանով մի անգամ ընդ միշտ ազդարարում ենք, որ հրազէն պարպելը սահմանափակված է միմիայն ինքնապաշտպանութեան համար, և այդ միմիայն կազմակերպութեանս տեղական մարմինների կարգադրութեամբ։ Հայ հասարակութիւնից՝ առանց խտրութեան՝ ով որ հակառակ վարմունք կունենայ, կենթարկվի մեր կողմից ամենախիստ պատասխանատուութեան»։

ԱՐԻՒՆԱԼԻՑ ԴԷՊՔԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ

Բռնակոթ (Զանգեզուրի գաւառ)

Նոյեմբերի 29-ին

Ամսիս 20-ին յարձակվում են Թազագիւղ հայ գիւղի վրա հարևան Թուրք աւազակաբոյն Սիսիան գիւղացիք։ Շնորհիւ շուտափոյթ օգնութեան, որ հասցրին մօտակայ հայ գիւղացիք, կարողացան Թուրքերի յարձակումը յետ մղել և ազատել գիւղը կոտորվելուց ու Թալանից։

Այդ կռւում հայերից թեթև վիրաւորվում է մէկը և մի ռուս ստրաժնիկ ծանր կերպով։ Ռուս ստրաժնիկը իր ընկերի հետ պատահաբար գործով եկած են եղել այդ գիւղը և կռւելիս են եղել Թուրքերի դէմ հայերի շարքում։ Թուրքերից սպանվում են երեքը, վիրաւորվում է մօտ տասը հոգի. այդպիսի դիմադրութիւն հայերի կողմից Թուրքերը չէին սպասում, ուստի վրէժխնդրութեամբ լցված, նրանք պատրաստվում են նորից յարձակվելու Թազագիւղի հայերի վրա և դրա համար կանչում են շրջակայ Թուրք գիւղերից հարիւրաւոր զինված մարդիկ. գալիս են այդ գիւղը և իրանց բարբարոսութեամբ վիճակումս յայտնի Մուրթուզ և Խանլար աւազակապետները իրանց խմբերով։

Չը նայած, որ այդ կռւում հայերի կորուստը համեմատաբար շատ թեթև էր—այն է մի վիրաւորված մարդ և կրակած խոտի մի դէզ, որը Թուրքերը կրակել էին գիւղը Թալանելու նպատակով, բայց և այնպէս խիստ վախենում են Թուրքերի նոր յարձակումներից և հէնց այդ գիշեր սկսում են գաղթել. կին ու երեխայ գիշերը, ժամը չորսին, երբ թափվեցին Ալուլու գիւղի փողոցները, նրանց վայնասունը, կոծն ու աղաղակը մարդու սիրտ էին կտրատում։

Տեսնելով այդ քայքայիչ գաղթը օգնութեան եկող մի խումբ կարիճներ հետևեալ օրն և եթ պահանջեցին Թազա գիւղացիներից վերադառնալ իրանց գիւղը և խոստացան պահապան հրեշտակների նման պահպանել նրանց, մինչև որ կառավարութիւնը խիստ միջոցների կը դիմէ՝ այն է կը զսպէ աւազակներին և մարդասպաններին։

Այդ դէպքից երեք օր յետոյ Թուրքերը նորից յարձակվում են Թազա գիւղի վրա։ Հայերը մեր ժողովրդական հերոս Քեռիի առաջնորդութեամբ կրկին անգամ յետ են մղում Թուրքերի յարձակումը, չը տալով իրանցից և ոչ մի զոհ, իսկ Թուրքերից մօտ տասը սպանվածներ վիրաւորների հետ, հայերը դուրս են քշում երեք Թուրք գիւղից (Միսիան, Ըրթըռուս, Ջոմարթղու) ժողովրդին առանց կրակելու ու Թալանելու Թուրք գիւղերը և այսպիսով մի բուռ հայ կարիճներ պաշտելի Քեռիի ղեկավարութեամբ և անվեհեր Դրօյի առաջնորդութեամբ երկրորդ անգամ ցոյց են տալիս Թուրքերին, թէ փոքրիկ Թազա գիւղն էլ իրաւունք ունի ապրելու իր հայրենիքում։

Անցնում է մի երկու օր և ահա ամսիս 26-ին ութ հոգի սիսիանցի Թուրքեր կտրում են Թազա գիւղ վերադարձող կանանց ու երեխաների ճանապարհը կոտորելու նպատակով, բայց բարեբախտաբար, այդ ճանապարհով անցնելիս է լինում Քեռին երեք ընկերով։ Թուրքերը յարձակվում են դրանց վրա հայհոյելով։ Քաջերը Թռչելով ձիերից, դիրքեր են մտնում և սկսում կռւել այդ ութ զինված Թուրքերի հետ։ Մինչ դրանք կռւում են, օգնութեան են հասնում Քեռիի մնացած ընկերները և Թազա գիւղացիների հետ պցելով դրանց օղակի մէջ, ութին էլ կոտորում են. յետոյ հայերը դառնում են կռւելու Սիսիանից եղբայրներին օգնութեան եկող հարիւրաւոր զինված Թուրքերի դէմ։ Կռիւը կատաղի է լինում։ Թուրքերը հայ կարիճների անվախ ու խրոխտ յարձակումների առաջ երկար չեն դիմանում, փախչում են մտնում իրանց գիւղի անմատչելի բերդը (այս բերդի մասին ասում են, որ Սիւնեաց իշխան Վասակի բերդն է) ու այդտեղից կռւում հայերի հետ։ Մերոնք գծացած մի կողմից կռւում են բերդից իրանց վրա Թափվող գնդակների դէմ, միւս կողմից կոտորում են բերդ բարձրացողներին, մի կողմից էլ գնդակների տարափի տակ մտնում են գիւղը կրակի և Թալանի մատնելով նրան։ Շուտ վրա հասնող գաւառապետի օգնականը և Թուրք Թարգման Շահսուար-բէկը կօզակներով դադարեցնում են իր տեսակի մէջ յանդուգն և կատաղի կռիւը։ Թուրքերից սպանվածներ հաշւում են 60—70 մարդ, կրկնապատիկ վիրաւորներով, հայերից սպանվում են ինն մարդ—դրանցից մի քանիսին սպանեցին կօզակների հետ եկող Թուրք ստրաժնիկները. բռնակոթեցիներից մէկին հէնց հանդում խփեցին։ Կռւի հետևեալ օրը եկաւ և գաւառապետը քննիչի հետ։ Չը նայած Թուրքերի այդպիսի պարտութեանը, նրանք էլի սպանութիւններ են գործում հայերին և ճանապարհներ կտրում. օրինակ, Ղալաձորդ հայ գիւղից Ծաղբս եկող չորս հայերի Մուրթուզը մորթոտում է. մի քանի օր յետոյ նոյն գիւղացի ինն հոգի Դարալագազի Մալիշկա գիւղից վերադառնալիս մորթոտում են Թուրքերը։ Մի խօսքով այժմ մեր վիճակում ոչ մի ապահովութիւն չը կայ, գիւղից-գիւղ գնալու համար մեծ ռիսկ է հարկաւոր։ Սիսիանում սպանված Թուրքերի մէջ կան և յայտնի աւազակ Խանլարը ու Չէյնալաղչին և ուրիշները։ Այդ կռւի պատճառով բռնված են Բռնակոթից 12 մարդ, որոնք ոչ մի մեղք չունեն։

Սիւնեցի

ԺՕՐԻՍԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Սուլթանի դէմ մահափորձի մեղադրանքով ամբաստանված բելգիացի Ժօրիսի և նրա հայ ընկերների դատը տեղի է ունեցել Կ. Պօլսում, նոյեմբերի 12-ին։ Առաջ ենք բերում մանրամասնութիւնները, արտատպելով «Ռազմիկ» Թերթից։

Պօլիս 11 Նոյ.—Այս առաւօտ Պէլճիգացի Ժօրիսի և իր ընկերներուն դատավարութիւնը տեղի ունեցաւ Թրքական դատարանին առջև։ Սրահը լեցված էր խուռն բազմութեամբ, մեծամասնութիւնը Թուրք։

Նախագահն էր, Հիլմի և հինգ դատաւորներ։

Դատախազ՝ Նէճմէտտին էֆ.։

Հասարակութեան մէջ կը տեսնուէր նաև Նէճիպ փաշա Մէլհամէն, հիւպատոսարաններու և դեսպանատան Թարգմանները։

Դատարանին ներկայացան անիշխանական Ժօրիսը իր 15 ամբաստանեալ ընկերներով միասին. իսկ 30-ի չափ ամբաստանեալներ բացակայ էին։

Դատախազը կարդաց ամբաստանագիրը, որ կազմուած էր Եըլտըզի մէջ մասնաւոր Քննիչ Յանձնախումբի կողմէ տրուած տեղեկագրին վրայ։

Անոր մէջ կը նկարագրուէր այն ամբողջ գործունէութիւնները, որոնք տեղի ունեցած էին ծանօթ մահափորձէն առաջ։ Նոյն տեղեկագրով Քննիչ Յանձնախումբը կը յայտարարէ թէ՝ տեղի ունեցած ոճիրին կարելի չէ քաղաքական գոյն տալ, որովհետև անիշխանական Ժօրիսի ռումբին հետևանքով 26 անմեղներու մահը զուտ ոճրագործական հանգամանք ունէր, և որուն Թրքական օրէնսգիրքը մահվան պատիժ կը տնօրինէ։

Նախագահ Հիլմի՝ Ժօրիսին.

—Ամբաստանեալ, յանցաւոր կը նկատենք ձեզ՝ տեղի ունեցած ոճրագործութեան մէջ։

Ժօրիս.—Կը խոստովանիմ թէ՝ մասնակցող մը եղած եմ բուռն գործի մը, որ գործադրուած է բռնակալներու դէմ։ Համոզումով անիշխանական եմ. այն միակ գաղափարը՝ որուն մինչև այսօր հետևած եմ՝ եղած է ազգերը իրարու մերձեցնել, անհատականութիւնը բարձրացնել, պետութիւնը կործանել, սահմանագլուխները ու անհատական ձեռնարկութիւնները ոչնչացնել, որոնք երկար դարերէ ի վեր պայքարի աղբիւր եղած են։ Եւ որովհետև Ա. Համիտը արև. ազգերու մերձեցման արգելք մը եղած է, մենք որոշեցինք սպաննել զինքը, այն յոյսով թէ՝ ասիկա հայ ազգին ազատութիւն բերէ և Թուրքիոյ մէջ բնակող բոլոր ազգութիւնները պիտի հաշտեցնէ։

Նախ.—Դուք, ամբաստանեալ, շատ տկար կերպով կը ճանչնաք հայկական ջարդերու բուն պատճառները։

Ժօրիս.—Հայկական ջարդերը գործադրեցին Քիւրտերը՝ բարձրագոյն հրամանով։ Պարտականութիւնս էր մասնակցիլ այս ձեռնարկին, կանխաւ համոզուած ըլլալով թէ՝ անիկա պիտի բարելաւէր դրութիւնը։

Ես չէի ճանչնար հայ կազմակերպութիւնը, եթէ մինչև իսկ ճանչցած ալ ըլլայի՝ ասիկա պատճառ մը չէր որ օտար գաղտնիքներ երևան հանէի։

Սուլթանի դէմ եղած մահափորձը ղեկավարված էր Լիբա Րիբաէն—ռուսական կեղծ անուն մը—Րուպինա Ֆայնէն՝ որ երիտասարդ ռուսահայուհիի մը կեղծ անունն է։

Նախ. Ձեր այս ձեռնարկին համար քանի քիլօգրամ պէտք էր։

Ժօրիս.—Մահափորձը պատճառող կառքին մէջ 800 քիլ. մելինիտ կար։

Նախ. Չմտածեցի՞ք թէ ձեր այս մահափորձով շատ մը անմեղներու մահուան պատճառ պիտի ըլլաք։

Ժօրիս.—Ես խորապէս կը ցաւիմ 26 անմեղներու մահուան վրայ, բայց ինչ ընեմ։ Ազգերու ճակատագրին փոփոխութիւնը ամեն ատեն անզգին ու նշանակելի զոհերու ընկերացած է։

Ամբաստանեալ Ժօրիսին՝ Թարգմանի միջոցով ըրած յայտնութիւնները՝ սրահին մէջ գտնուող Թուրք հասարակութեան վրայ մեծ ազդեցութիւն ներգործեցին։

Հակառակ բամբասանին, Թուրք պաշտօնեաները առանց ոևէ բան մը ուտելու կամ խմելու, ամբողջ 8 ժամ դատավարութիւնը շարունակած են։

Նախագահը կը յայտարարէ թէ՝ դատը պայրամէն վերջ՝ 5/9-ին դեկտ. յետաձգուած է։

—Պօլսոյ Եղեռնադատ Ատեանը՝ Դեկտ. 5-ին աւարտելով Սուլթանի մահափորձին համար ամբաստանուած հայերու և պէլճիգացի Ժօրիսի դատավարութիւնը տուած է հետևեալ վճիռը։

Մահուան դատապարտուած են՝ 10 փախստականներ, որոնք են Լիբա Րիբա, Րուբինա Ֆայն, Եղուանդ Ֆրանկիւլեան, Ճօրճ Բեդրի Վարշամով, Միլիօ Րիչի, Գարլ Եուվանովիչ, Դրաստ Եուվանովիչ, Մկրտիչ Ղարիպեան, Տիկին Սօֆի Րիբա և Աննա Նէլճևա Ժօրիս. ինչպէս նաև՝ չորս հոգի ձերբակալուածներ են, որոնք են՝ պէլճիգացի Էտուար Ժօրիս, Մանուկ Իւմիւտեան Նշան Յովհաննէսեան (բանտին մէջ արդէն սպաննուած) և Առաքել Նահապետեան։

Ցկեանս բերդարգելութեան դատապարտուած են 7 փախստականներ, որո՛նք են՝ Յովակիմ, Գարեգին, Անտոն Գոզ, Եղուանդ Ալաճաճեան, Թադէոս Յակոբեան և Տիկին Աշըժա, ինչպէս նաև երեք հոգի ձերբակալուածներէն՝ որոնք են Ֆրօ Պաղտօեան, Յովհաննէս Ղարիպեան և Յովսէփ Թօփալեան։

15 ՏԱՐՈՒԱՆ ԹԻԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ դատապարտուած են ձերբակալուածներէն՝ 3 հոգի, որոնք են՝ Մանուկ Օթօյեան, Պօղոս Կէչեան և Մանուկ Կէչեան։

ԱՆՊԱՐՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ ԵՆ՝ ձերբակալուածներէն 3 հայ և չորս յոյն. որոնք են՝ Երուանդ Յովհաննէսեան, դրամատան Եղիա Գահվէճեան, Սէրքըզ տ'Օրիանի ծառայ Խաչիկ Պլօյեան, ինչպէս նաև յանձնակատար Միխալ և Մաթէօ, երկաթագործ Միլթօ և Մանոլ։

Փախստականները զրկուած են քաղաքական իրաւունքներէ և իրենց զրաւուած ինչքերը պիտի մատակարարուին Պատժ. Օրէնքի 31-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն։

Դատապարտեալները առանց ո և է բառ մը արտասանելու՝ վճիռը լսեցին։ Վերաքննութեան դիմելու համար 8 օր պայմանաժամ տրուած է։

Պօլիս, 7 դեկտ. — Պելճիգայի դեսպանը Թուրքիոյ խիստ ծանուցագիր մը տալով, գապիտիւլասիօններու հիման վրայ կը պահանջէ, որ Պելճիգայի հպատակ և մահուան դատապարտուած Ժօրիսը Պօլսոյ Պելճիգական հիւպատոսարանին յանձնուի։

Ի նշան բողոքի՝ Պելճիգայի հիւպատոսարանի Թարգմանը վճիռին արձակուելէն առաջ դուրս ելաւ դատարանէն։ Թուրքիա կը պնդէ այն կէտին վրա թէ՝ գապիտիւլասիօններու մէջ կանխատեսուած չեն տէրութեանց վեհապետներուն դէմ եղած ոճիրները։ Որովհետև Թուրքիա վճռած է հակառակիլ Պելճիգայի պահանջին, հաւանականաբար երկու կառավարութիւններու միջև ծանր կնճռոտութիւններ պիտի ծագին։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

(Պատասխան պ. Լէօին)

V

Մեզ շատ հեռուն կը տանէր խնդիրը, եթէ երկար ծանրանայինք պ. Լէօի բերած մանրամասնութիւնների վրա։ Սակայն հարկաւոր է միայն լուսաբանել նրա առաջ բերած հիմնական թեզը, որ բազիսն է կազմում նրա բոլոր ասածների, որպէս զի դրանով մենք առհասարակ պատասխանած լինենք պ. Լէօին։

«Հայ սօցիալ-դեմօկրատիա—ասում է պ. Լէօն—դեռ չը կայ, գոնէ առ այժմ չէ երևում հրապարակում իբրև աչքի ընկնող ույժ։ Բայց նա պէտք է լինի, նա պէտք է աջողութիւն գտնէ մեզանում, ժողովրդականութիւն ստանայ։ Բայց դրա համար հարկաւոր է, որ դէն շպրտվի անմիտ թշնամութիւնը դէպի ազգութիւնը, մի թշնամութիւն, որ անմիտ է ամենից առաջ հէնց սօցիալիզմի տեսակէտից»։

Պ. Լէօն չը գիտէ, որ աւելի քան երկու տարուց ի վեր գոյութիւն ունի սօց.-դեմ. բանւորական հայ կազմակերպութիւն իր մարմիններով ու օրգանով, թէև նա, ճիշտ է այդ, «աչքի ընկնող ույժ չէ ունեցել հրապարակի վրա»։ Սակայն այդ ոչինչ։ Պ. Լէօն չը գիտէ նոյնպէս, որ հայ սօցիալ-դեմօկրատիան ոչ միայն թշնամի չէ ազգութեան, այլ և նրա ամենամեծ բարեկամն է։ Բարեկամ հէնց այն հասարակ պատճառով, որովհետև նա վարում է ազգի ամենաստորին դասակարգի, պրօլետարիատի, կուսակցական քաղաքականութիւնը. բարեկամ հէնց այն պատճառով, ասում ենք, որովհետև նա՝ սօցիալ-դեմօկրատիան, անխնայ մերկացնում է ազգի ամենաբարձր դասակարգի համազգային յայտարարված շահերի ու ձգտումների դասակարգային բնոյթը. որովհետև նա անխնայ տրորում ու ջախջախում է նացիօնալիստական սնամէջ ֆրազէօլօգիան՝ բուրժուական այդ ամրակուռ վահանը։

Հայ սօցիալ-դեմօկրատիան երբեք չէ ասել և չի ասիլ պրօլետարիատին. Ժխտի՛ր քո ազգի գոյութեան ձգտումները, մերժի՛ր քո ազգի կուլտուրական զարգացման ազատ իրաւունքները։ Սօցիալ-դեմօկրատիան միշտ ասել է և կասէ պրօլետարիատին. «Գործադրի՛ր քո դասակարգային ազդեցութիւնը ազգի քաղաքական կամքի վրա ad amussim այնպէս, որ նրա հասարակական հանրագումար ֆակտօրները շահագործվեն յօգուտ քո դասակարգային շահերի»։ Մենք պրօլետարիատին հասկացնում ենք, որ այսպէս անուանված «ազգային» ինստիտուտներ, յանուն որոնց ֆրազաբանում են բուրժուական իդէօլօգները ամենուրեք, ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ ինստրումենտներ ազգային բուրժուազիայի, ազգի տիրապետող դասակարգի։

Ինքը՝ պրօլետարիատը, ըստ իր դասակարգային էութեան, ըստ իր դասակարգային կուսակցական քաղաքականութեան կազմում է ամենապրօգրեսիւ և ամենադեմոկրատական տարրը գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերի մէջ։ Նշանակում է, երբ սօցիալ-դեմօկրատիան—պրօլետարիատի դասակարգային քաղաքականութեան ներկայացուցիչը—ազգային ինստիտուցիաների և հասարակական ֆակտօրների սօցիալական արժէքը գնահատում է բացառապէս պրօլետարիատի դասակարգային շահերի տեսակէտից, նա ոչ թէ «թշնամութիւն ունի դէպի ազգութիւնը», այլ, ընդհակառակը, նրա առաջադիմութեան ու բարեկեցութեան ամենամեծ բարեկամն է։ Չէ՞ որ պրօլետարիատի դասակարգային շահերի տեսակէտը ծայրահեղ հակադրութիւնն է կազմում բուրժուազիայի դասակարգային շահերի հայեցակէտի, որի ուղն ու ծուծը կայանում է ոչ միայն աշխատանքի ստրուկի—բանւորի—անողորմ էքսպլօատացիայի, այլ և առհասարակ ազգային բոլոր ինստիտուցիաների և հասարակական ֆակտօրների անխնայ շահագործութեան՝ ասել է թշուառացնելու մէջ, յօգուտ իր դասակարգային սպեցիֆիկ շահերի։

Ինքը՝ պ. Լէօն իսկ համոզուած է, որ անմիտ է և գոյութիւն չունի ազգային թշնամութիւն «հէնց սօցիալիզմի տեսակէտից»։ Միայն հարկաւոր էր փարատել նրա կասկածն ու Թիւրիմացութիւնը, որ հայ սօցիալ-դեմօկրատիան ամենահաւատարիմ հետևողն է գիտնական սօցիալիզմի և այդ տեսակ սկզբունքային խնդիրներում նա այլապէս չէ մտածում։ Սակայն թող ներէ մեզ պ. Լէօն փակագծում նկատելու հետևեալը։ Մենք կարծում ենք, որ մեր բուրժուական իդէօլօգները սօցիալիզմի այսպէս անուանված՝ համամարդկայնութեան գաղափարը ըմբռնում են սոսկ իդէալիզմի և պլատօնական մարդասիրութեան տեսակէտից։ Եւ մենք չէինք սխալվի, եթէ պնդէինք, որ նրանք շատ Թոյլ են հասկանում դասակարգային շահերի, դասակարգային կռւի և դասակարգային տիրապետութեան գաղափարը պատմական կեանքում, ու այդ բոլորի փաստական լուսաբանութիւնը մատերիալիստական, ռէալիստական պրինցիպներով։ Պ. Լէօի «Թիւրքահայ խնդիր» մասին գրածը հաստատում է մեր ասածը։

Սրանով արդէն մենք անցնում ենք մի այլ սկզբունքային խնդրի, որով և կը փակենք մեր ամբողջ ասելիքը։ Կարճ և ամփոփ որոշենք սօցիալ-դեմօկրատիայի դիրքը դէպի Թիւրքահայ շարժումը և տանք այդ շարժման բնոյթը, առանց ծանրանալու նրա ծագման պատճառների և նրան հետևող կազմակերպութիւնների վրա։

«Հայ սօցիալ-դեմօկրատիան—ասում է պ. Լէօն—անյայտ թշնամութիւն է յայտարարել այն շարժման, որի նպատակն է բարւոքել Թիւրքահայի դժոխային դրութիւնը։ Դա հայոց հարցն է. մի հարց, որ հայ մարքսիստների կարծիքով մի յետադիմական, բուրժուազական շարժում է, որ սաստիկ վնասում է ռուսահայ պրօլետարիատի շահերին։ Ուստի հայ մարքսիստները իրանց ամենագլխաւոր ձգտումներից մէկն են համարում դիմադրել այդ շարժման, Թուլացնել նրան։ Հայոց հարցը մարքսիստները մի անգամ ընդմիշտ մկրտել են նացիօնալիստական շարժում անունով։ Անուանում են այդ շարժումը նացիօնալիստական։ Բայց այստեղ ամբողջ դժբախտութիւնը լաւ չը հասկացված բառն է։ Նացիօնալիզմը ենթադրում է ազգային մեծամասնութիւնից առաջացած ագրեսիւ գործողութիւն՝ տիրապետելու, ուրիշներին ստրկացնելու, իր լուծի տակ մտցնելու համար։ Հայկական շարժումը չէ կարող նացիօնալիստական լինել նախ այն պատճառով, որ նա ապրելու իրաւունք է ստանում, մարդկային տարրական ազատութիւններով ապրելու իրաւունք…։ Դա յետադիմութիւն չէ, դա վնաս ու անէծք չէ, ինչպէս կոչում են հայ սօցիալ-դեմօկրատները, այլ, ընդհակառակը, մի առաջադէմ շարժում, որին աջակցում էր թէ հայ գիւղացին, թէ արհեստաւորը, թէ վաճառականը և թէ բեռնակիր մշակը։ Բայց կարելի է ասել, թէ ազատագրութեան գործը սրանցից միայն մէկի համար է։ Ո՛չ։ Նա ամենքի համար է։ Թո՛ղ այս անգամ էլ, ինչպէս ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, ամենից շատ օգուտը լինի բուրժուազիան։ Այդպէս էլ պէտք է լինի, որպէս զի զարգանայ կապիտալի ույժը, առաջ բերելով դասակարգային մրցութիւն, ուղիղ ճանապարհ դէպի սօցիալիզմը»։

Այսպէս է դատում պ. Լէօն, Այս մեծ ցիտատը լիքն է խոշոր Թիւրիմացութիւններով և սխալներով։ Գոհ կը լինի արդեօք պ. Լէօն, եթէ նրան հաւատացնենք, որ նա միանգամայն անտեղի մեղադրանք է վերագրել հայ սօցիալ-դեմօկրատիային, երբ նա կարծում է (հիմնվելով մի անհասի յօդուածի վրա), որ հայ սօց. դեմ. «անյայտ թշնամութիւն է յայտարարել Թիւրքահայ շարժման, անուանելով նրան յետադիմական, վնասակար ու անէծք դարձած մի շարժում»։ Երևակայեցէք, սօցիալ-դեմօկրատիան—միջազգային թէ հայկական, որ անխնայ կռւում է ոչ միայն վարձու բանւորների շահագործութեան դէմ, այլ և առհասարակ ամեն մի շահագործութեան և բռնութեան դէմ, լինի դա ուղղուած դէպի դասակարգ, կուսակցութիւն, սեռ թէ ազգ, այդ միևնոյն է,—նոյն այդ սօցիալ-դեմօկրատիան, ըստ պ. Լէօի, Թշնամի է և յետադիմական, վնասակար է համարում Թիւրքահայերի—տասնեակ տարիներով տանջված ու հիւծված մի Թշուառ ժողովրդի—ազատագրական շարժումը, յեղափոխական կռիւը ընդդէմ միջնադարեան [illegible] դեսպոտիզմի։ Մի այնպիսի փորձուած ու հմուտ գրողից, ինչպիսին պ. Լէօն է, մենք, խոստովանում ենք, առնուազը չէինք սպասում, որ նա առանց այլևայլութեան, առանց չնչին վերապահութիւնների մի այդ տեսակ չեղած ու չասուած փաստ վերագրէ մի ամբողջ կազմակերպութեան։ Թիւրքահայ, մակեդոնական, և այլ նմանօրինակ յեղափոխական շարժումները ճնշուած ժողովուրդների, ոչ միայն «յետադիմական կամ վնասակար» չէ, այլ և յառաջադիմական է քառակուսի աստիճանի. և թող հաւատացած լինի պ. Լէօն, որ հայ սօցիալ-դէմօկրատները ոչ միայն նոյնպիսի բարեկամներ ենք Թիւրքահայ շարժման նկատմամբ, ինչպէս Բեբէլ, Ժօրէս և ուրիշ մեծութիւններ այլ և, եթէ ուզում էք, մի բան աւելի։ Մենք կարող ենք մեր ծանրակշիռ առարկութիւններն ունենալ Թիւրքահայ շարժումը վարող հայ յեղափ. կազմակերպութիւնների դէմ, նրանց կռուի մեթօդի, յեղափոխականութեան նկատմամբ. մենք, իբրև սօցիալ-դէմօկրատներ, կարող ենք տարբեր կարծիք ունենալ Թիւրքահայ խնդրի լուծման վերաբերմամբ, քան դաշնակցականներն ու հնչակեանները. դա բոլորովին այլ բան է. մեր տարբեր հասկացողութիւն ու բացատրութիւնը բնաւ չէ նշանակում քննադատական օբեկտի ժխտում։

Սա թիւրիմացութիւնների բաժինն էր։ Այժմ անցնենք սխալների բաժնի բացատրութեան։

Բ. Իշխանեան

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունվարի 3-ին

Նոր տարին էլ իր անդրանիկ զոհերը տուեց. կրկին արիւն, օրը ցերեկով։ Յունվարի 2-ին Թուրքերը սպանեցին երկու անմեղ հայերի, հայոց նոր գերեզմանների մօտ, Նորագաւթի ճանապարհին, իսկ երեկոյեան ժամը 7-ին մի ջահել Նորքցու՝ որի միայն գլուխն են կտրել տարել և մի ռուս ֆէլդշէրի սպանել են երկրորդ ոստիկանատան մասի մօտ։ Կարծէք թէ ոստիկանութիւն չը կայ։ Տասնմէկ ամիս է ինչ Թուրքերը մեզ կոտորում են, բայց կառավարութիւնը լոկ հանդիսատես է լինում այդ հռչակաւոր ողբերգական դրամայի և ասում է թէ «հանդարտ կացէք, ամեն ինչ կարգադրված է, ոչինչ չի պատահիլ»։

Կովկասի Փոխարքայի հրամանով երկու կողմից երեքական պատգամաւորներ են ընտրված, բայց կրկին արիւնը հոսում է փողոցներում։

Ռուս զինուորների բռնած դիրքը անհասկանալի է դարձել։ Զինուորներին ասում ենք թէ «տես, այնտեղ Թուրք ջանբեզարներ են կանգնած, բարեհաճեցէք խուզարկել»։ Պատասխանում են թէ «չէ հրամայված»։ Մինչ դեռ Թուրքերի եափնջու տակից երևում է լաւ հարուածանի հրացանի կոթը։

Նորքցիք խմբովին դիմեցին Վօլօշինօվին՝ Եացկևիչի տեղապահին, բողոքելու և խնդրելու, որ իրանց ճանապարհի համար պահապան նշանակվի։ Պատասխանում է թէ. «պահապանի համար հարկաւոր են տաք սենեակներ»։ Իսկ ծրատեղից գտնեն ամբողջ 3 վերստ հեռաւորութեան վրա տաք սենեակ։ Խնդրում են զէնքի իրաւունք և չը խուզարկել.—Թէ «զէնքի իրաւունք կը տամ, միայն ինձ մօտ պահէք. իսկ տուն գնալիս եկէք և նորից վերցրէք կամ թէ չէ զէնքի իրաւունք կը տամ, միայն եթէ այդ ճանապարհին Թուրք սպանվի, պատասխանատու դուք՝ հայերդ էք։ Բայց Վօլօշինօվը չէր մտածում, որ այդ վերջին պայմանի համաձայն Թուրքերը իրանցից մէկին կը սպանեն ու կը գցեն Նորքի ճանապարհի վրա ու կասեն թէ հայերն են սպանել։ Այստեղից խումբը դիմեց նահանգապետին, որ խոստացաւ «կարգադրութիւն անել»։

Երկու օր է ինչ խանութները փակ են։

Պարոյր Տէրունեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յունվարի 9-ին Կովկասի գլխաւոր կառավարութիւնը վերադարձրեց Ներսիսեան դպրանոցի դրամագլուխները, իսկ կալուածներն արդէն վերադարձրել են մի քանի շաբաթ առաջ, որի մասին և իր ժամանակին հաղորդել էինք «Մշակ»-ում։

Ինչպէս յայտնի է, աշակերտների գործադուլից ներկայ ուսումնական տարվայ առաջին կիսամեակում ուսումը շարունակվեց ընդհատումներով և ուսումնարանները չը ստացան ուսանողներից լիովին առաջին կիսամեակի վճարները և այդ պակասորդը ուսումնարանների ծախսերի համար, մանաւանդ այն ուսումնարանների, որոնց եկամտի համար առանձին նշանակութիւն ունեն աշակերտական վճարները, առանձնապէս զգալի է։ Կովկասեան ուսումնական շրջանի պ. հոգաբարձուն դեկտեմբերի 27-ից մի յատուկ շրջաբերական է ուղղել իր շրջանի ուսումնարանների վարչութիւններին, որի մէջ յայտնում է, որ ուսուցիչներին լրիւ ռոճիկ վճարելու համար Կովկասեան փոխարքան իր տրամադրութեան ներքոյ գտնուող գումարներից բաժին է հանել միայն 30,000 րուբլի, այն ինչ աշակերտների վճարների պակասորդը խոշոր գումար կազմելով, յիշեալ 30,000 րուբլին չէ կարող գոհութիւն տալ ուսուցիչներին լրիւ հասանելի ռոճիկներին. պետական գանձարանը եւ՝ նեղ վիճակի մէջ գոլով—անկարող է օգնութիւն հանելու, ուստի առաջարկում է միջոցներ գտնել ծախսերը կրճատելու՝ մասամբ, գուցէ, որտեղ այդ կարելի է, զուգահեռական դասարանները փակելով յունվարից, կամ, գուցէ, մի քանի առարկաներից դասերը պակասեցնելով և այլն։ Այս առիթով մի քանի ուսումնարաններում կայացան ծնողներից ժողով, որոնցից շատերը խոստացան առաջին կիսամեակի վճարները ներկայացնելու և այդպիսով օգնութիւն հասցնելու ուսումնարանների և ուսման կանոնաւոր կերպով ընթանալուն, իսկ մի քանի ուսումնարաններում արտաքոյ կարգի մանկավարժական ժողովներ կայացան և և այս հարցը իրաւաբանական տեսակէտից քննելով՝ գտան, որ ուսուցիչները վարձված լինելով ուսումնական տարեգլխից մինչև միւս տարեգլուխը, պիտի ստանան իրենց հասանելի ռոճիկները լիովին, ուստի և եթէ աշակերտական վճարները չը ծածկեն ծախսերը—որոշել են դիմել Կով. պ. հոգաբարձուին, որ նա միջնորդէ, ուր հարկն է, պակաս գումարը լրացնելու։

—

Հալաբար Թաղի հայ գաղթականները, որոնք զանազան տեղերից Թուրքերի ձեռքերից փախել են և ապաստանարան են գտել այստեղ, ներկայ ցրտաշունչ ձմռան մեծ նեղութիւններ են կրում և անպայման, կարօտ են բարեգութ մարդկանց կարեկցութեան և օգնութեան։ Յունվարի 7-ին մեռելոցի օրը, Հալաբարի հանգստարանում մի քանի հայ օրիորդներ և տիկիններ, որոնք այցելելով այդ թշուառներին՝ աչքով տեսել են դոցա սոսկալի և ողորմելի վիճակը՝ հանգանակութիւն էին բացել՝ ի նպաստ այդ թշուառների։ Բայց կարիքը մեծ է և շատ ցանկալի է, որ մեր հայ տիկինները և օրիորդները, որոնք քաղաքիս միւս մասերումն են բնակվում և համեմատաբար լաւագոյն վիճակի մէջ են, չըզլանան այսպիսի մի աղէտի ժամանակ իրանց քոյրերին դրամով, զգեստներով և այլ հարկաւոր նիւթերով օգնութեան ձեռք կարկառել։

—

Յունվարի 8-ի երեկոյեան, Կովկասեան 4-րդ հրացանաձիգ բատալիոնը երկաթուղով մեկնեց Թիֆլիսից՝ ռազմական լիակատար կարգով—դէպի Բաթում։

—

Գանձակից Թիֆլիս հասաւ անցեալ օրը առաւօտեան ժամը 8-ին այնտեղի սապերների բատալիոնի մի վաշտը։—Եւ զարմանալի զուգադիպութիւն. հէնց որ սապերների մի մասը հեռացաւ, անցեալ երեկոյեան քաղաքում տեղի ունեցաւ սաստիկ հրացանաձգութիւն, որի մասին հաղորդել ենք «Վերջին տեղեկութիւնների» բաժնում։

—

Երէկ, յունվարի 10-ի առաւօտեան Ղարաչաղ մեկնեց Թիֆլիսի գաւառապետը, որը գնում է այնտեղ համոզելու Թուրքերին խաղաղ ճանապարհով վերադարձնելու այնտեղի կալուածատէրերից կողոպտած իրերը և անասունները։ Գաւառապետի հետ գնում է և շարքի պաշտօնեայ Միրզա-Շէրիֆ Միրզաևը, որպէս բացատրող և խաղաղարար։—Աւազակներին ուզում են խաղաղ միջոցներով մարդ դարձնել... Եւ մինթէ դա մի կոմէդիա չէ... Եւ այն էլ միայն կալուածատէրերի գոյքերն են յետ ուզում... Իսկ բազմաթիւ հասարակ հայ գիւղացիները, որոնք մի կերպ պատսպարվել էին Ղարայազում և որոնք բացարձակապէս զրկվեցին ամեն ինչից։

—

Թիֆլիսի երկաթուղու կայարանի դէպօյի արհեստանոցներում գործող բանուորներից արձակված են 214 բանուոր, համաձայն 1906 թ-ի յունվարի 2-ին տրված հրամանի։ Դրանք արձակված են գործադուլին մասնակցելու պատճառով։

—

Յունվարի 6-ին, Մկրտութեան տօնի օրը Շուլավէրում անյայտ անձեր սպանել են ոստիկանական պահակի աւագ պահապանին։ Այդ սպանութիւնը շուլավէրցիների մէջ սարսափն աւելի սաստկացրել է. գիւղում մութն ընկնելուց յետոյ ոչ ոք չի երևում։

—

Բագւում հրատարակվող «Кавк. Слово» լրագիրը առաջին համարից և եթ դադարման ենթարկվեց, բայց յետոյ նորից թոյլտւութիւն եղաւ հրատարակելու, միայն ոչ պ. Սունդուկեանի խմբագրութիւնով, այլ Զ. Ա. Շպակովի։

—

Թիֆլիսում կազմված սահմանադրական-դեմօկրատական կուսակցութեան բիւրօն որոշել է հրատարակել մի ժողովածու այն բոլոր օրէնքների ու բացատրութիւնների, որ հրատարակվել են մինչև օրս Պետական Դումայի վերաբերմամբ. իբր յաւելված՝ պէտք է լինի կուսակցութեան ծրագիրը և Կովկասին վերաբերվող օրէնքների բացատրութիւնները։

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետ Ալիխանով-Աւարսկին նշանակված է Քութայիսի գեն.-նահանգապետ, ուր և մեկնեց երէկ, իսկ նրա փոխարէն Թիֆլիսում գեն.-նահանգ. նշանակված է գեներալ Տիմօֆէևը։

—

Յունվարի 9-ին Թիֆլիսում կրկին գործադուլ եղաւ, միայն միօրեայ—իբր յիշատակ և յարգանք անցեալ տարվայ յունվարի 9-ին Պետերբուրգում կատարված անցքերի։ Խանութները, բացի ուտեղէններ վաճառողներից, բոլորն էլ փակ էին։ Կէս օրից մի քիչ անց, մի վաշտ զօրք երկաթուղու կայարանի մօտից սկսած՝ կոտրատելով խանութները, բաց անելով դռներն ու փեղկերը, առաջ եկաւ հասաւ մինչև գերմանական եկեղեցին։ Խանութներից մի քանիսի տէրերը եկան հասան և տէր կանգնեցին իրանց խանութի և ապրանքների, իսկ որոնց տէրերը չը կային, կնքվեցին։ Դեկտ. 10-ի առաւօտեան Միքայէլեան կամուրջի մօտի և Միքայէլեան փողոցի խանութներից շատերի կնիքները կոտրատված գտան։ Ասում են, որ տէրերն են կոտրատել և խանութները բաց արել։ Սակայն երկաթուղին բանում էր անարգել. չէին գործում նաև բոլոր քարշակները։

—

Կրօնշտատում կազմակերպվում են ծովային կոմանդաների երեք էշելօն անկարգութիւնները խաղաղացնելու համար Պրիբալտեան երկրում։ (Нов. Вр.)

—

«Военный Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Բաթումից Պետերբուրգ եկաւ զինուորական ինժեներ Զախարին, որին ուղարկել է Բաթումի բերդի կոմենդանտը բարձր իշխանութեանը զեկուցանելու համար գործերի դրութեան մասին։ Ամբողջ քաղաքը, բացի բերդից, գտնվում է յեղափոխականների ձեռքում, որոնք պաշտօնից հեռացնելով քաղաքային իշխանութիւններին, նախագահ են (պրեզիդենտ) ընտրել և քաղաքային միլիցիա են հիմնել։ Կոմենդանտը անյապաղ օգնութիւն է պահանջում, որովհետև նրա տրամադրութեան տակ զօրքերի միայն մի աննշան զօրաբաժին է գտնվում, որոնց մէջ նոյնպէս յուզմունք է նկատվում։

—

Կալանաւորված է Խարկովի համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ռէյնգարդտ։ Համալսարանի խորհուրդը, ի նկատի ունենալով Ռէյնգարդտի թոյլ առողջութիւնը, դիմեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը՝ միջնորդել արձակել նրան բանտից։ Մինիստր կոմս Տօլստոյ ուղարկեց այդ միջնորդութիւնը Դուրնօվօին։ (Молва)

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակված է փոխարքայութիւնը Կովկասում ոչնչացնելու նախագիծը։ Վերջին օրերի դէպքերը ցոյց տուեցին, թէ որքան անպատասխանաբար է միահեծան իշխանութիւնը մի այդքան զանազանակերպ ազգաբնակութիւն ունեցող երկրի համար։ Այդ պատճառով մտադրութիւն կայ փոխարքայութեան փոխարէն հիմնել երեք գեներալ-նահանգապետութիւններ. մէկը կը միացնէ Թուրք և հայ ազգաբնակութիւնը, միւսը—մանր կովկասեան ազգութիւնները, իսկ երրորդի մէջ կը մտնեն Հիւսիսային Կովկասը և Տէրէքի, Կուբանի ու Չերնօմորեան շրջանները։ («Нов. Вр.»)

—

Թիֆլիսից «Нов. Время» լրագրին հեռագրում են հետևեալը։ «Սուր կերպարանք առաւ հայ Թուրքական ընդհարումները Շուշու և Զանգեզուրի գաւառներում։ Արևմտեան Կովկասը առանձնացած է, հեռագրական և երկաթուղիական գծերը վնասված են ապստամբների կողմից։ Վրաց հոգևորականութիւնը որոշեց անջատել վրաց եկեղեցին պետութիւնից։ Համաժողովի պատւիրակները որոշեցին յունվարի 14-ից ընդհատել յարաբերութիւնները սրբազան սինօդի հետ։ Ելիսաւետպօլ երկաթուղիական կայարանում բռնված է զէնքի մի ամբողջ տրանսպօրտ»։

—

Սիմֆէրօպօլից «Нов. Время» լրագրին հեռագրում են. «Թէրէք» մարտանաւը դուրս եկաւ ծով կնքված հրամանով։ Յունվարի 4-ին գնում են էլի մի քանի նաւեր։ Ծովայինները հաստատում են, որ դա հրաման է գնալ դէպի Կովկասի ափերը և զօրքեր ափ իջեցնել Նօվօրօսիյսկում և Բաթումում։»

—

«Դրօշակի» մէջ (№ 13) կարդում ենք հետևեալը։ «Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան մարմինները, համաձայն ներկայ տարվայ Խորհրդի գծած ցուցմունքների, որոշել են՝ հրատարակել Կովկասում դաշնակցական յատուկ լրագիր, օգտւելով մամուլի ազատութիւնից, խլված միապետութիւնից յեղափոխական կռւի միջոցով։ Ի նկատի ունենալով, որ կովկասեան նոր հրատարակութեան մէջ արտայայտութիւն պիտի գտնէ մեզ զբաղեցնող խնդիրների մի նշանաւոր մասը, խմբագրութիւնը որոշեց «Դրօշակը», որ սկսել էր լոյս տեսնել ամիսը երկու անգամ, նորից միամսեայ դարձնել։ «Դրօշակը» շարունակում է մնալ կազմակերպութեան միակ պաշտօնական օրգան»։

—

«Դրօշակ»-ի խմբագրութիւնը հետևեալ հեռագիրն է ուղղել Հ. Յ. Դաշնակցութեան անունից եւրոպական դիւանագիտութեան և մամուլին. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը պարտք է համարում յիշեցնել մեծ պետութիւնների դիւանագիտութեան, որ Մակեդօնիայի մէջ ֆինանսական կոնտրօլի համար նաւային հաւաքական ցոյցը որքան և ուրախացնում է Դաշնակցութիւնը, այնքան էլ իրաւացի յուզմունք է պատճառում նրան, ի տես օսմանեան կառավարութեան սպառնալիքներին, որը թերևս տրամադիր է իր պարտութեան համար վրէժխնդիր լինելու, կազմակերպելով Հայաստանի մէջ քրիստոնեաների նոր կոտորածներ։ Կոտորածը արդէն իսկ ըսկսված է Էրզրումի և Բիթլիսի վիլայէթներում։ Դաշնակցութիւնը ծայրայեղ կերպով բողոքում է Բերլինի դաշնագիրն ստորագրող դիւանագիտութեան ապշեցուցիչ անտարբերութեան դէմ հայ ժողովրդի վերաբերմամբ, որի դատը մակեդօնականից անբաժան է և որին այդ դիւանագիտութիւնը շարունակում է մատնել ամենաժայրագ ճնշումների, առանց կեանքի ու ամենատարրական իրաւունքների ոեւէ երաշխաւորութեան»։

—

«Հօրիզոն» լրագրում կարդում ենք. «Նոյեմբերի 21-ին (ն. տ.) Խարբերդի և Մալաթիոյ մէջ երկրաշարժի զօրաւոր ցնցումներ պատահեր են, գլխաւորաբար վնասեր են հայաբնակ գիւղերը, Թաղերը, բաւական տուներ փլեր և եկեղեցական շէնքեր վնասեր են, 8—10 անձի կորուստ ալ կայ։ Խարբերդի ամենէն շատ վնասուած հայ գիւղերն են՝ Քէսիրիկ, Մօրենիկ, Բէրչէնջ, Խօյլու, Դաւէժ, Սուրսուրի Վանքը և գիւղը։ Մօրենիկի, Քէսիրիկի, Խօյլուի եկեղեցները բոլորովին անգործածելի դարձեր են։ Մալաթիոյ մէջ ալ բաւական տուներ վնասված են։ Հիւսնի Մանսուրի եկեղեցին նոյնպէս անգործածելի դարձեր է։ Երկրաշարժի թեթև ցնցումներ պատահեր են նաև Տիգրանակերտի մէջ։ Վերոյիշեալ քաղաքներու շրջականներն ալ կը կարծվի թէ մեծ վնասներ կրած են»։

—

Ամերիկայի «Հօչնակ» լրագիրը հաղորդում է, որ Ուօրչէսդրում, դոկտ. Կ. Մակարեանի ջանքերով կազմվել է յայտնի ամերիկացիներից բաղկացած մի Յանձնաժողով «Հայաստանի Ամերիկեան Բարեկամներ»—American Friends of Armenia»—անունով, որի առաջին գործն է եղել Մ. Նահանգների այլ և այլ քաղաքներում կարևոր քաղաքացիներից ստորագրութիւններ հաւաքելով դիմել Նախագահ Րուզվելտին, որպէս զի Վաշինգտոնի կառավարութեան միջոցով՝ Հաագայի առաջիկայ համաժողովում բողոքէ Թիւրքիայում և Ռուսաստանում հայերի դէմ գործված անիրաւութիւնների դէմ և մի ձևական ապահովութիւն ձեռք բերէ, որ այդ բարբարոսութիւնները չեն վերսկսվի։ Նոյն Յանձնաժողովը ձեռնարկել է նաև հայերի ի նպաստ մի հանգանակութեան, որի առաջին ցանկը հրատարակել է «Հօչնակ»։ Այդ առաջին ցանկի գումարն է 263 դօլլար։ Հանգանակութեան մասնակցել են ի միջի այլոց քաղաքագլուխը, գաւառային քարտուղարը, նախկին քաղաքագլուխը, պօստի կառավարիչը և այլն։

—

Ջրօրհնէքի տօնին չքաւորներին բաժանելու համար ստացանք տիկ. Սօնիա Շահնազարեանից 5 ր. 2) Մարտիրոս Անանեանից 10 ր. 3) Ազգաշի մի խումբ տիկ. և օրիորդներից՝ տիկ. Սարգսեանի ձեռքով հաւաքած 13 ր. 33 կ., 4) Ա. Առաքելեանից 1 ր.։

—

Հրաւիրում ենք բարեգործ անձերի ուշադրութիւնը տեխնիկական ուսումնարանի I-ին դաս. որբացած աշակերտ Գալուստ Տէր-Աղաբեանի վրա, որը միջոց չունենալով ուսումը շարունակելու, ստիպված է ուսումը թողնել։ Նրա հասցէն է. Тифлисъ, Батумская ул. № 8, բնակար. Յակոբեանի։

—

Մենք ստացանք մեր երկրի հայ աղէտեալների օգտին 27 ր 64 կ., որ հանգանակել է Կուկեայ Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցում Աղէքսանդր քահանայ Տէր-Յովհաննիսեանցը ճրագալոյցի երեկոյեան։ Այդ գումարը հանգանակողների ցանկութեամբ կուղարկվի Վեհափառ Կաթողիկոսի հաստատած նպաստամատոյց յանձնաժողովին։

—

Յունվարի 9-ին երեկոյեան Թերրօ Կօբելաշվիլիի բնակարանից (Կօբիյակի փող. սեփ. տուն) գողացված է 195 ր. մուրհակներ, ժամացոյց, 6 հատ ոսկէ մատանի և 4 ր. 75 կ. փող. բոլորը 227 ր. 20 կ. արժողութեամբ։ Յանցաւորին, որը ինչպէս պարզվեց, Թ. Կօբելաշվիլիի բարեկամն է—Դիդօմ գիւղի բնակիչ Դաթիկօ Միչիլաշվիլին է եղել. ոստիկանութիւնը ձերբակալել է գողացված իրերի հետ միասին, բացի փողից և մատանիներից։

—

Յունվարի լոյս 10-ի գիշերը ժամը 1-ին Թիֆլիսի վաճառական Մարի Կիրիչևի խանութից, (Գօլօվինսկի պրօսպ. տ. Օբօյեանի) կոտրելով խանութի դռան կողպէքը, անյայտ չարագործները տարել են զանազան գալանտերէնի ապրանք 2240 ր. արժողութեամբ. միջոցներ են ձեռք առնված չարագործներին փնտրելու։

—

Թիֆլիսի արտիլլերիական պահեստի վարչութիւնը խնդրում է «Кав.» լրագրին յայտնել, որ «անցեալ նոյեմբերի 24-ին պահեստից տարված 500 բերդանի հրացաններից, որ բաժանվել էին Թիֆլիսի ազգաբնակութեան աւելի վստահելի մասին կարգը պահպանելու համար, մինչև այժմ պահեստն է վերադարձված ոստիկանութեան միջոցով միայն 268 հրացան»։—«Աւելի վստահելի մասը»... և դրանք սօցիալ-դէմօկրատներն են... Տէր Աստուած, այս ինչ մտքերի ու հասկացողութիւնների շփոթութիւն է տիրում մեր կայսրութեան մէջ։ Մի կողմից «աւելի վստահելի» են համարում, միւս կողմից ձերբակալում...

Կովկասին լաւ յայտնի գեներալ Ֆրեզէ, որ տխրահռչակ Գօլիցինի կառավարչապետի օգնականն էր, իսկ յետոյ նշանակվեց Վիլնայի ընդհանուր-նահանգապետ, այժմ արձակվել է իր պաշտօնից մի պատճառի համար, որ պէտք է շատ տարօրինակ Թուայ... ազատամտութեան համար։ Նա հրապարակօրէն յայտնել է, որ հոկտ. 17-ի մանիֆեստը—սահմանադրական ակտ է, ուստի և չէ համաձայնել Պ. Բուլըգից եկած հրահանգներին՝ փոխել կուրսը։ Սրանից կարող ենք այն եզրակացութիւնը հանել, որ Վիլնայի համար շատ ազատամիտ է համարվել նոյն իսկ Գօլիցինի օգնականը։

—

Ինչպէս և պէտք էր սպասել, այս տարի պարբերական հրատարակութիւնների բաժանորդագրութիւնը սաստիկ հարուած կրեց և շատ թերթեր ու հանդէսներ ստիպված են դադարեցնել իրանց հրատարակութիւնը։ Մանաւանդ շաբաթական և ամսական հանդէսների բաժանորդագրութիւնը սաստիկ կրճատվեց։ Դեկտ. վերջերին «Вѣст. Европы» ամսագիրը ունէր միայն 7 բաժանորդ. «Историч. Вѣстникъ»—20, «Вѣст. Всемір. Исторіи», որ առաջ ունէր 700-ից աւելի բաժանորդ, այժմ ունի միայն 10։ Հայ հանդէսներից առ այժմ միայն «Առողջապահիկ Թերթն» է յայտարարում, որ ժամանակաւորապէս դադարեցնում է Թերթի հրատարակութիւնը։

—

Սահմանադրական-դեմօկրատական կուսակցութիւնը սկսում է լայն ծաւալ և զարգացում ստանալ ամբողջ Ռուսաստանում։ Բագվում ևս բացվեց այդ կուսակցութեան ճիւղը, որի ընդհանուր ժողովը կայացաւ յունվարի 7-ին և ընտրեց ճիւղի համար բիւրօ։ Ընտրվեցին պ.պ. Բայկօվ, Կ. Խատիսեան, Թաղիանօսեան, Միրօսլավսկի, Վօնսովիչ, Թօփչիբաշեվ, Կալլան, Պօղլեբեսկին, Ալիբէկեան, Գաջինսկի, Փէյգէլ, Ելիաշվիլի, իշխան Դադեանի և Յունանեան։ Այդ խումբը ձեռք բերեց «Баку» լրագիրը, որ այսուհետև համարվելու է կուսակցութեան օրգան։

—

Կոմս Վիտտէն ներկայումս հիւանդ է։ Պատճառը նրա ջղերի սաստիկ քայքայման վերջին երեք ամսվայ յոգնածութիւնն է։ Նրան խնամում է բժիշկ Շիրօկօվ։ Վերջին օրերս չը կայացան մինիստրների խորհրդի նիստերը։ (Р. Сл.)

—

Չեն հաստատվում այն լուրերը թէ կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի տեղ նշանակվում է գեներալ-ադիւտանտ Կուրօպատկին։ Յիրաւի կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ յունվարին գնալու է Պետերբուրգ, բայց միայն ամենահպատակ զեկուցում ներկայացնելու համար գործերի դրութեան մասին Կովկասում։ (Р. Сл.)

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Յունվարի 3-ին հայ սիրողների խումբը, Ժողովարանի դահլիճում խաղաց «Դամօկլեան սուր» դրաման, երեք գործողութեամբ և վօդէվիլ «Պաշտօնս խնդրում էս»։ Խաղն անցաւ շատ աջող։ Թատրօնը կիսով չափ լցված էր։ Դրամայի մէջ աչքի էր ընկնում պ. Արտաշէսեան՝ Տիգրանի դերում. պարոնը առաջին անգամ չէ, որ ցոյց է տալիս իր շնորքը Բագուի բեմի վրա։ Վատ չէր և օր. Մէլիք-Շահնազարեանցը փաստաբանի կնոջ դերում։ Պ. Սահակեանը Արմենակի դերի մէջ միանգամայն գովելի էր։ Տիկ. Գիւրջեանը Աննայի դերում բաւարար էր, իսկ պ. Պատականեանը վօդէվիլի մէջ, զինուորի դերում, միանգամայն գովելի էր։ Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ թատրօնից»։

—

Յունվարի լոյս 10-ի գիշերը, 1-ին մասի ոստիկանը Օլգինսկի փողոցում բռնեց Թիֆլիսի բնակիչ Յովսէփ Շախօվին գորգով և 2 բարձերով, որ գողացել էր՝ կոտրելով Թիֆլիսի բնակիչ Ստեփան Գիլէվակու պատուհանի երկու ապակիները, Գրիբաեդօվսկի պեռէուլկում, Պիրալովի տան։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

Մենք արդէն յայտնեցինք, որ յունվարի 3/16-ին ֆրանսիական ազգային կօնգրէսը, այն է սենատի և պարլամենտի միացեալ ժողովը ձայների մեծամասնութեամբ, 449 ձայներով ընդդէմ 371-ի ֆրանսիական հանրապետութեան նախագահ ընտրեց սենատի նախագահ Ֆալիէրին։

Կլեման-Արման Ֆալիէր ծնվել է 1841 թ., ծագումով գիւղացի է, պրօֆեսիայով՝ փաստաբան։ Նա նուիրեց իրան քաղաքական գործունէութեան և 1876 թ. ընտրվեց պատգամաւոր, տեղ գրաւեց ձախակողմեան հանրապետականների շարքում և դարձաւ Գամբետտայի կուսակիցներից մինը։ Նա պատկանում էր այն 363 պատգամաւորների թւին, որոնք Ժիւլ-Սիմօնի մինիստրութեան անկումից յետոյ, յամառ կռիւ էին մղում Մաք-Մահօնի հետ և կոչ արին երկրին մի առանձին մանիֆէստով, ուղղված Մաք-Մահօնի դէմ, 1877 թ. մայիսի 18-ին։ Պարլամենտի ընտրութիւնների ժամանակ 1877, 1881, 1885 և 1899-ին նա ընտրվեց և վերընտրվեց պատգամաւոր։ Երբ 1880 թ. մայիսին Կոնստանը ստացաւ ներքին գործերի մինիստրի պորտֆէլը, Ֆալիէրը ընտրվեց նրա օգնական և մնաց այդ պաշտօնում մինչև 1881 թ. նոյեմբեր ամիսը Ֆերրիի կաբինետի մէջ։ Դիւկլէրկի կաբինետում (1882 թ. օգոստ.-յունվ. 1883 թ.) Նա եղաւ ներքին գործերի մինիստր և երբ ընկաւ այդ մինիստրութիւնը, Ֆալիէրը կազմեց նոր մինիստրութիւն, մնալով ներքին գործերի մինիստր, բայց այդ մինիստրութիւնը տևեց 1883 թ. յունվարի 29-ից մինչև փետրվարի 21-ը, ուրեմն միայն մի քանի օր։ Նա անցկացրեց պարլամենտում արքայական դինաստիայի անդամների Ֆրանսիայից աքսորելու օրինագիծը, բայց երբ այդ օրինագիծը մերժվեց սենատի կողմից, նա հրաժարական տուեց և նրա տեղը բռնեց Ֆերրիի երկրորդ կաբինետը։

1883 թ. նոյեմբերին Ֆ. նշանակվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր և աւարտեց տարրական կրթութեան ռէֆօրմի գործը։ 1887 թւին նա եղաւ ներքին գործերի մինիստր Րուվիէի օպպորտունիստ կաբինետի մէջ. ապա նշանակվեց մինիստր արդարադատութեան (1887 թ. դեկտ.—1888 թ. ապրիլ), նորից ժողովրդական լուսաւորութեան (1889 թ. փետրվ.—1890 թ. մարտ) և դարձեալ արդարադատութեան մինիստր 1890 թ. մարտից մինչև 1892 թ. փետրվարը։ Նա վարեց և արտաքին գործերի մինիստրի պաշտօն։ Իսկ 1890 թ. ընտրվեց սենատոր և երբ 1899 թ. մարտին սենատի նախագահ Լուբէն ընտրվեց հանրապետութեան նախագահ, Ֆալիէր նրա տեղ ընտրվեց սենատի նախագահ և այժմ այդ պաշտօնից ընտրվեց Ֆրանսիայի պետ։ Իր քաղաքական գործունէութեան ընթացքում նա շարունակ յամառ կռիւ մղեց արքայականների, կղերականների և բուլանժիզմի դէմ և միշտ յաղթող հանդիսացաւ։ Նա յայտնի է և իբրև կողմնակից ֆրանս-ռուսական դաշնակցութեան, որովհետև նա մասնակցեց Ֆրէյսինէի կաբինետին (1891 թ.), որ առաջին անգամ կնքեց այդ դաշնակցութիւնը։

Ընդհանուր գծերով բնորոշելով Ֆրանսիայի նոր նախագահին, պէտք է ասենք, որ նա չափաւոր, բայց համոզված հանրապետական է, դուրս եկած ժողովրդի կողմից, անցել է պարլամենտարիզմի երկար դպրոց և իր կօրրէկտ վարմունքով ու հասարակական շահերին անձնուիրութեամբ ձեռք է բերել ընդհանուր յարգանք։ Բուլանժիզմի ժամանակ նրա հակառակորդն էր Դումէր, պարլամենտի նախագահը. նախկին արմատական, բայց յետոյ օպպորտունիստ և նոյն իսկ կղերականների բարեկամ։

Ֆրանսիական ժամանակակից քաղաքական գործիչներից մինը հետևեալ սրախօս բնորոշումն է տալիս նոր նախագահին. «Ֆալիէրը ունի այնպիսի միջակ յատկութիւններ, որ առաջ են քշում նրան, իբրև ամենայարմար կանդիդատը հանրապետութեան նախագահի համար»։ Պէտք է ասել, որ հանրապետականները, առհասարակ, չեն կամենում տեսնել նախագահական աթոռի վրա փայլուն ընդունակութիւնների և արտակարգ ձիրքերի տէր անձն։ Նրանց հարկաւոր է նախագահ-մեքենայ, որ սահմանափակվէ միայն իր սահմանադրական պարտաւորութիւնների խստիւ կատարմամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 յունվարի

ԼՈՆԴՈՆ, 6 յունվարի։ Մինչև կէսօր ընտրված են 209 պատգամաւոր, 33 հոգի բանուորական կուսակցութեան ներկայացուցիչներ, 61 նացիօնալիստներ և 66 ունիօնիստներ։ Ստէնլէյ լօրդը, որ Բալֆուրի կաբինետում պօստի և հեռագրաթելի կառավարիչ էր, չընտրվեց։ Մինչև այժմ տեղեր են շահել—լիբերալները՝ 111, բանուորների ներկայացուցիչները՝ 28, և ունիօնիստները՝ 3։

ՓԱՐԻԶ, 6 յունվարի։ Մինիստրների ժողովում նախագահ Լուբէն ճառ արտասանեց, որի մէջ իր խնդակցութիւնը յայտնեց այն հանգստութեան և արժանապատւութեան համար, որ ցոյց տուեց ազգը յունվարի 4-ին Վերսալի ընտրութիւնների ժամանակ, և ասաց, որ Ֆրանսիան ամբողջ աշխարհի աչքում շատ կը բարձրանայ։ Մինիստր նախագահ Րուվիէն պատասխանեց, որ թէպէտ ֆրանսիացիները երբեմն հակումն են ցոյց տալիս դէպի անառողջ բռնկումներ, սակայն միւս դէպքերում օրինակ են հանդիսանում այնպիսի յատկութիւնների, որոնցով կարող է պարծենալ Ֆրանսիան։

ՄՕՍԿՎԱ, 6 յունվարի։ Յուզիչ լուրերը, որ վերաբերում էին յունվարի 6-ին, չիրականացան։ Մկրտութեան հանդէսը անցաւ սովորական կարգով, ահագին ամբոխի ուղեկցութեամբ։ Ընդամենը 600 յայտարարութիւններ եղան մօտաւորապէս այն 130,000 անձերից, որոնք ընտրական իրաւունք ունեն։

ՊԼՕՑԿ, 6 յունվարի։ Ձերբակալված են 28 լաւնիկներ և նրանց Թեկնածուները, որոնք հրաժարվել էին կատարելու դատաստանական պարտականութիւնները պետական լեզուով։

8 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Յունվարի 7-ին սահմանադրական-դէմօկրատական կուսակցութեան համաժողովը որոշեց մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին մշակելու համար այնտեղ ընտրողական ազատութիւնների մասին և միջոցներ երկիրը խաղաղացնելու համար։

ԿԱԼԻԺ, 7 յունվարի։ Պետական բանկի բաժանմունքը յայտարարում է, որ անարգել կերպով վերադարձվում են պահեստագումարները պետական խնայողական դրամարկղից։ Անդադար մեծանում են խնայողական դրամարկղին դրամ յանձնողների թիւը, մանաւանդ հրէաներից։

ԼՈՆԴՈՆ, 7 յունվարի։ (Րէյտէր)։ Մինչև երեկոյեան 9 ժամ 30 րօպէն ընտրված են 224 պատգամաւոր, 35 բանուորական կուսակցութիւնից, 96 ունիօնիստներ, 78 իրլանդիացի-նացիօնալիստներ։ Ազատամիտները շահեցին 120 տեղ։

ԱԼԺԻՍԻՐԱՍ, 7 յունվարի։ (Հաւաս)։ Առաջին հինգ օրերի ընթացքում, որ անցկացաւ կօնֆէրէնցիան բանալուց յետոյ, երևան չեկաւ դրութիւնը փոխող մի նոր փաստ։ Բրիտանիայի յայտարարութիւնը առաջին նիստում և բաց դռների սկզբունքի ընդունելը հիանալի տպաւորութիւն գործեց. սակայն կօնֆէրէնցիայի իսկական դժուարութիւնները չեն վերացված։ Նրանց քննութիւնը միայն յետաձգված է։ Վհատեցնող տպաւորութիւն է գործում գերմանական պատւիրակների գործունէութեան եղանակը նախատեսելու անհնարինութիւնը։

ՊԵՏՐՕԿՕՎ, 7 յունվարի։ Եռանդով կատարվում են նախընտրական աշխատանքները Դումայի ընտրութիւնների համար։ Այս օրերս սպասվում է ցուցակի հրատարակութիւնը։ Նկատվում է հետաքրքրութիւն դէպի ընտրութիւնը ազգաբնակութեան կողմից, մանաւանդ բանուորների և հրէաների կողմից։

ԼՕՆԴՕՆ, 7 յունվարի։ (Րէյտէր)։ Զինուորական վարչութիւնը դիտաւորութիւն ունի նորից զինել ափային պաշտպանութիւնը Թէմզայից մինչև Պլիմուտ, փոխարինելով չորս դիւյմանոց թնդանօթները եօթը դիւյմանոցներով։

ՓԱՐԻԶ, 7 յունվարի։ (Րէյտէր)։ Մարոկկեան հարցի վերաբերեալ բազմամարդ միտինգում Ժօրէս յայտնեց, որ ներկայ ժամանակի դժուարութիւնների պատասխանատւութիւնն ընկնում է Դէլկասէի վրա։ Կարելի էր խուսափել ընդհարումից, եթէ իր ժամանակին խորհրդակցութիւն լինէր շահագրգռված պետութիւնների միջև։ Որոշում ընդունվեց, որով բողոք է յայտնվում գաղտնի դիւանագիտութեան դէմ և վճռականութիւն խաղաղութիւնը պահպանելու համար ջանքեր գործ դնելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Այստեղ կատարեալ համոզմունք է տիրում, որ յունվարի 9-ին Պետերբուրգում ոչինչ լուրջ անկարգութիւններ տեղի չեն ունենալու, նախ՝ այն պատճառով, որ բանուորների ահագին մեծամասնութիւնը այդ բանը չէ ցանկանում, երկրորդ՝ այն պատճառով, որ կառավարութիւնը թոյլ չի տայ խմբական ցոյցեր անկարգութիւններով։

ՎԱՐՇԱՎԱ, 7 յունվարի։ Երկրի գլխաւոր հրամանատարի կարգադրութեամբ, զինուորական դրութեան կանոնների հիման վրա Կալիշեան դատարանի պրոկուրօր Սկօրեատին հեռացրված է պաշտօնից զինուորական դրութեան ժամանակ։ Ի նկատի ունենալով քաղաքային եկամուտների թոյլ ստացումը, մագիստրատը նախագծում է ընթացիկ ծախսերի համար փոխ առնել կանալիզացիայի կրեդիտի գումարը։ Կենտրոնական բիւրօի հաշւով, ընտրողների թիւը Վարշավայում մօտ 30,000 է։

ՊԱՎԼՕԳՐԱԴ, 7 յունվարի։ Խորօշևսկայի աւանում գիւղացիները կողոպտեցին իշխան Շչէրբակովի խուտորը։

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 7 յունվարի։ Հանգստութիւնը վերահաստատելու համար օսերից կազմակերպվում է պլաստունների մի զօրաբաժին, որը վաղը ճանապարհ կընկնի Ալագիր։

ԲԵՐԼԻՆ, 7 յունվարի։ Սօցիալ-դէմօկրատական «Ֆօրվէրտս» լրագրում հրատարակված է, որ կիրակի յունվարի 31-ին գումարվելու է Բեռլինում ազգային ժողով։ Հռետորների թւում անուանված են՝ Արօնս, Բէբէլ, Ֆիլէր, Հէյնէ և ուրիշները։ Մի և նոյն ժամանակ հրաւիրվում են 62 ժողովներ Բեռլինի սահմանակից ուրիշ տեղերում։ Բոլոր ժողովներում հերթական հարց նշանակված է բողոք՝ ժողովրդին ստրկացնելու և նրա իրաւունքներից զրկելու դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Բարձր կառավարչական շրջաններից բղխող լուրերի համեմատ, Կովկասեան երկրի վարչութեան մէջ ոչինչ ռէֆօրմներ չեն մտցնվի մինչև Պետական Դումայի գումարելը։

ՕՍՏԱԿՕՎ, 7 յունվարի։ Կալանաւորված են գիւղացիների մէջ պրօպագանդ անելու համար կասկածվող զեմստվային պաշտօնեայ Րատմանով և կալուածատէր Բէլօվ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Ֆինլանդական հեռագրի գործադուլը դադարեց։ Հեռագրատան գլխաւորի առաջարկութեամբ արձակվածները խնդիրք տուին յետ ընդունվելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Կառավարչական հիմնարկութիւնների մէջ ստացվող տեղեկութիւնների համեմատ, շատ անձինք, որոնց մօտ պահվում էին յեղափոխական ապստամբութեան համար ժողոված փողերը, անհետացան վերջին յեղափոխական գործողութիւնների ժամանակ, տանելով իրանց մօտ գտնվող դրամագլուխները։ Այդ դրամագլուխները ժողոված էին կամաւոր նուիրատւութիւնների և գործարանների բանուորների օրավարձից պարտաւորաբար հանվող գումարներից, նոյնպէս բռնի կերպով յափշտակել են թշուառ աղքատ մարդկանցից, որոնք անզգուշութիւն են ունեցել հանել իրանց պահեստադրամները խնայողական դրամարկղներից։ Յոյս կայ, որ այդպիսի վրդովեցուցիչ երեւոյթներից յետոյ բանուորները և չքաւոր մարդիկ կը դադարեն յեղափոխականների տէրորին ենթարկվելուց և իրանց բոլոր խնայողութիւնները կը յանձնեն խնայողական դրամարկղները։

Սիբիրեան գծով դէպի Վլադիվօստոկ հեռագրական հաղորդակցութեան բացակայութեան պատճառով թոյլատրված է հեռագիրներ ընդունել Աւստրիայի վրայով իւրաքանչիւր բառի համար 28 կօպէկ վճարով՝ ուղարկելու համար Վլադիվօստոկ, Ասիական Ռուսաստանի հիմնարկութիւնները Վլադիվօստոկից մինչև Բլագովէշչենսկ, նոյնպէս Խարբին։

ԲԵՐԼԻՆ, 7 յունվարի։ Պատերին կպցրված է ոստիկանութեան նախագահի յայտարարութիւնը, որը նախազգուշացնում է, որ չը նայելով սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան վճռին, անհնարին բան չէ, որ կարգը խանգարեն ժողովրդական մասսաները կիրակի օրը գումարվելիք ազգային ժողովներից յետոյ։ Կարգի խախտումը կը դադարեցնվի անխնայ կերպով ծայրայեղ միջոցներ գործ դնելով։ Խաղաղ բնակիչներին առաջարկվում է հրաժարվել ժողովներ այցելելուց, այնպէս կարող է պատահել, որ կը վնասվեն անմեղների կեանքը և առողջութիւնը։

ԿՐԱՍՆՕՅԱՐՍԿ, 7 յունվարի: Ժամանեց Սիբիրեան երկաթուղու Նոր գլխաւորը: Արհեստանոցներում տեղ-տեղ բարիկադներ են շինված: Շատ բան ջարդված է, շատ բան էլ յափշտակված: Դէպօն գործում է: Արհեստանոցները մաքրում են: Կարգի կարելի է բերել երկու շաբաթվայ ընթացքում: Ապստամբները անձնատուր եղան յունվարի 4-ին: Ձերբակալված են 740 մարդ:

ՄՕՍԿՎԱ, 7 յունվարի: Բացվեց ազնուականութեան պարագլուխների համաժողովը: Հաւաքվեցին 70 մարդ: Նախագահ է ընտրված իշխան Տրուբեցկոյ: Առանձին յանձնաժողով է կազմված Ռուսաստանի ամբողջութեան մասին ծայրերում: Հարց է յարուցված գրաւադրված կալուածքների համար վճարումները յետաձգելու մասին:

ՏՕՐԺՕԿ, 7 յունվարի: Գաւառական զէմստվային վարչութեան տնտեսական այն յանձնաժողովի նիստում, որը քննում էր հողային բանկի միջոցով գիւղացիների համար երկու կալուածք գնելու հարցը, շահագրգռված գիւղերի ներկայացուցիչների մեծամասնութիւնը հրաժարվեց հողը գնելուց, յոյս ունենալով ձրի ստանալ այդ հողը, իսկ միացածները յետաձգեցին սակարկութիւնը մինչև որ Դուման կը լուծէ հարցը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի: «Русь» լրագրի խմբագիր հրատարակիչ Ա. Ա. Սուվօրինին, որը մեղադրվում է քրէական օրինագրքի 129-դ յօդուածով, դատաստանական պալատի առանձին ատեանը դատապարտեց բերդարգելութեան մի տարով, իրաւունք տալով միջնորդել Թագաւոր Կայսրի առաջ կրճատելու այդ ժամանակամիջոցը մինչև երեք ամիս:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի: Սահմանադրական-դէմօկրատական համաժողովը ցերեկվայ նիստում, դրական մտքով վերջացնելով Դումայի ընտրութիւնների հարցը, անցաւ լսելու Գէսսէնի և Ստրուվէի զեկուցումները կուսակցական տակտիկական գործողութիւնների մասին ընտրողական պայքարում: Պրօֆէսսորների խորհրդակցութեան մէջ համալսարանական րէֆօրմի մասին որոշվեց, որ կանօնադրութիւնը պէտք է պարունակէ հիմնական կանօններ, հնարաւորութիւն տալով իւրաքանչիւր համալսարանին մշակել կազմակերպութիւն տեղական պայմաններին համաձայն: Բացի րէկտօրական յանձնաժողովից չորս առանձին յանձնաժողովներ են կազմված մշակելու համար վարչութեան, դասատուների և դասատուութեան հարցերը: Առ այժմ ցանկալի է համարված, մինչև կանօնադրութեան հաստատումը Դումայից, Թոյլատրել դասաւանդութեան և քննութիւնների առարկայական սիստեմը դասընթացայինի փոխարէն:

7 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Նօվօյէ Վրեմիա» լրագրում տպված է Լ. Լ. Տօլստոյի յօդուածը: Բնորոշ է վերջինի պատասխանը այն հարցին, թէ ինչ պէտք է անէ ժամանակակից մարդը: Պատասխանի մէջ ասված է. բարոյականութեան մակերևոյթի իջնելը շահաւէտ և յարմար է բոլոր անբարոյական մարդկանց համար, ուստի որքան աւելի անբարոյական են մարդիք, որքան աւելի վստահ կերպով զբաղվում են նրանք հասարակական յեղափոխութեամբ: Ուրեմն ինչ պէտք է անեն մարդիկ: Անկրօնասէր մարդիք ուրիշ բան չունեն անելու, եթէ ոչ այն, ինչ որ անում են—յարել մի որ և է կուսակցութեան, կռւել, ատել և վնասել:

ՓԱՐԻԶ (Հավաս): Իմանալով որ Վենեցուէլլայի նախագահ Կաստրօն արգելել է ֆրանսիական դեսպան Թէնէէին ափ իջնել Լագուաթեան նաւահանգստում, մինիստր-նախագահը հրամայեց վերադարձնել այստեղի վենեցուէլեան ներկայացուցիչ Մօզուրիէին անցագիրը և առաջարկել նրան անմիջապէս թողնել ֆրանսիական հողը: Երեկոյեան Մօզուրիէն մեկնեց Լիէժ:

9 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի: Պետերբուրգի քաղաքապետը յայտարարում է, որ քաղաքում տարածում են լուրեր, որոնց տարածմանը օգնում են և մամուլի մի քանի օրգանները, Պետերբուրգում մօտ օրերս կատարվելիք խառնակութիւնների մասին: Նա յայտարարում է, որ այդ լուրերը հաստատող փաստեր չը կան: Եթէ փորձեր լինեն անկարգութիւններ առաջացնելու, իսկոյն և եթ կը խեղդվեն: Իսկ աւելորդ արիւնհեղութիւնից խուսափելու համար, որին կարող են դիմել զօրքերը, ազգաբնակութիւնը հրաւիրվում է հեռու կենալ հաւաքումներից և Թափօրներից:

ՄՕՍԿՎԱ, 8 յունվ: Գեն.-Նահանգապետը յայտարարում է, որ յեղափոխական կուսակցութիւնները, յաղթվելով յանցաւոր պրօպագանդայում և զինված ապստամբութեան մէջ, այժմ դիմում են այլ զէնքի—զրպարտութեան և սպառնալիքի, որոնցով աշխատում են առաջացնել Թշնամական վերաբերմունք դէպի օրինական կառավարութիւնը և արգելել սովորական կեանքի և հանգստութեան վերականգնումը: Վարչութիւնը մեղադրվում է վայրի կամայականութեան և օրինախախտման մէջ, զօրքերը—բարբարոս վերաբերմունքի և դաժան բռնութիւնների մէջ խաղաղ մարդկանց վերաբերմամբ, որոնց իբր թէ ոստիկանութիւնը եռանդով ձերբակալում է առանց խտրութեան: Լուրեր են տարածում, որ իբր թէ ամեն երեկոյ քաղաքից դուրս են տարվում այդպիսի բռնութեան բազմաթիւ զոհեր և անխնայ գնդակահարվում: Յամառութեամբ լսվում են լուրեր մայրաքաղաքում անկարգութիւններ առաջացնելու մասին: Նոյն իսկ ասում են, որ այդ սպառնալիքներն իբր թէ յունվարի 9-ին և 12-ին են իրականացնելու: «Յայտնում են, որ այդ բոլոր լուրերը անհիմն են, իսկ գնդակահարութեան պատմութիւնները—չարամիտ ստեր»: Նա երաշխաւորում է, որ անկարգութիւններն այլ ևս չեն կրկնվի, որովհետև իր նախատեսած միջոցներով ամեն մի անկարգութիւն կը խեղդվի իր բնում և եթ:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 8 յունվ: Վիլլէմստադից եկած լուրերի համաձայն, Վէնէցուէլայի կառավարութիւնը եռանդով զօրքեր է կենտրոնացնում ծովափնեայ քաղաքներում և զինում են նրանց:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 8 յունվ: Պետական-քարտուղար Րուտը յայտնեց, որ Հաագայի խաղաղութեան կօնֆէրէնցիայում Միացեալ-Նահանգների կողմից ներկայացուցիչ կը լինեն Լօնդօնի նախկին դեսպան Չօէտը, Պարիզի նախկին դեսպան Պօրտէրը և դատաւոր Րօզը:

ԲԵՐԴԻՉԵՎ, 7 յունվ: Ձերբակալված են տեղական յեղափոխական կազմակերպութիւնների 32 գլխաւորները: Գլխաւոր ղեկավար դօքտօր Պլիխը կարողացաւ փախչել:

ԲԻՅՍԿ, 8 յունվ: Գաւառներից հաղորդում են, որ վերադարձած պահեստի զինուորները սարսափ են գցել գիւղական վարչութիւնների վրա. Նրանք պահանջում են նպաստներ ամենքի համար, առանց աչքի առաջ ունենալու անհատների նիւթական ապահովութիւնը: Եղել են բռնութեան դէպքեր:

ԲԵՐԼԻՆ, 8 յունվարի: Սօց.-դեմօկրատական ժողովներն ամեն տեղ խաղաղ անցան: Ամեն տեղ ընդունվեցին կուսակցութեան կօմիտէտի մշակած րէզօլիւցիաները: Ոստիկանութիւնը միջոցներ էր ձեռք առել:

ՏՕՄՍԿ, 8 յունվ: Համալսարանի և տեխնօլօգիական ինստիտուտի պրօֆէսօրների խորհուրդը անհնար համարեց պարապմունքները յունվարին վերսկսել:

ԵԱՐՕՍԼԱՎԼ, 8 յունվ: Լօկալօվի ֆաբրիկան եկան մի հարիւրակ կազակ և ժանդարմներ և խուզարկեցին: Ձերբակալեցին դիրեկտոր Դէվիսօնին, նրա օգնական Սուզդալցեվին և մի քանի հոգի պաշտօնեաներից և բանւորներից:

ՍՈՒՉԱ, 7 յունվ: Այսօր կէս օրից յետոյ, ինչպէս և երէկ, 3000 հոգուց բաղկացած ամբոխն ուզում էր ազատել բանտարկվածներին: Զօրք կանչեցին:

ԹԷՀՐԱՆ, 8 յունվ: 1000-ի չափ Թէհրանցի մօլլաններ և վաճառականներ, բողոքելով նահանգապետի ձեռք առած միջոցների դէմ, հեռացան Շաբդէլազիմ աւանը: Անկարգութիւններից և արիւնհեղութիւններից խուսափելու համար, շահը համաձայնվեց հաշտվել այն պայմանով, որ կազմվի հոգևորականներից, վաճառականներից և հողատէրերից ընտրված մի ժողով, մօտ 50 հոգուց: Օրէնքները պէտք է ձևափոխվեն այն մտքով, որ բոլոր դասերը հաւասար լինեն օրէնքի առաջ, պրօտէկցիան և սրան-նրան տէր-կանգնելն արգելվելու են: Մօլլաները Թէհրան վերադարձան ծափահարութիւններով: Նահանգապետը հրաժարական տուեց: Վախենում են, որ այդ ժողովը կը պահանջէ մաքսատան բէլգիական պաշտօնեաների և մինիստր Կաուսի հեռացումը:

ՆՕՎԳՕՐՕԴ-ՍԷՎԵՐՍԿ, 8 յունվ: Չերնիգօվսկի նահանգը յայտարարված է արտակարգ պաշտպանողական դրութեան մէջ:

ԲԷՆԴԷՐ, 8 յունվ: Բէնդէրի գաւառի Կամրատ գիւղում, ուր բնակվում են 10,000 բօլգար, տեղի ունեցան անկարգութիւններ: Պրիստաւին և ուրեադնիկին ծեծեց ամբոխը և բանտարկեց, կործանեց մի քանի տներ: Ասում են, որ կան սպանվածներ:

ԲԱԹՈՒՄ, 8 յունվ: Թիւրք կառավարութեան իր Բաթումի կօնսուլին ուղարկած երկու շոգենաւերով շատ հեռանում են Թիւրքահպատակներն ահագին խմբերով ծովափնեայ քաղաքներից:—Պաշտօնից հեռանալու համար խնդիր տուած ոստիկանների փոխարէն նշանակվում են նորերը:

ՍԱՐԱՏՕՎ, 8 յունվ: Նահանգապետի պարտադիր որոշումներով արգելվում է փողոցներում լրագիր և գիրք ծախել դրա համար յատուկ Թոյլտուութիւն չունեցողներին. արգելվում է չը Թոյլատրված գրութիւնների վաճառումը և հակակառավարական բացագանչութիւնները:

ԿԱԶԱՆ, 8 յունվ. Ընտրողական ցուցակների կազմումը դանդաղում է, որովհետև ընտրելու իրաւունք ունեցողները չեն ուզում մասնակցել, Վեց օրվայ ընթացքում քաղաքի վեց քաղաքամասերում միայն 40 հոգի է ցանկութիւն յայտնել:

ՄՕՍԿՎԱ, 7 յունվարի: Քաղաքային վարչութիւնը մտել են 7000-ից աւելի յայտարարութիւններ ընտրողական ցուցակների մէջ մտցնելու մասին, իսկ Թաղային յանձնաժողովներ—4999: Օգոստոսի 8-ի օրէնքի համեմատ մտցրվածների հետ հաշւում են 10,000 ընտրողներ: Սօցիալ-յեղափոխականների կուսակցութեան Մօսկվայի կօմիտէտը դիմեց մի կոչով, առաջարկելով խուսափել յունվարի 9-ին ցոյցերից և մանիֆեստացիաներից, վայրկեանը անյարմար համարելով:

ՎՕԼՕԳԴԱ, 7 յունվարի: Քաղաքային դումայում գրվել են Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու համար 300 մարդ:

ՄՕՍԿՎԱ, 7 յունվարի: Մօսկվա-Կիեվ-Վօրօնէժեան երկաթուղու արագ գնացքը 456 վերստ հեռաւորութեամբ Մօսկվայից խորտակվեց: Սպանվածներ չը կան, վիրաւորները շատ են: Պատճառը անյայտ է:

ՎԱՐՇԱՎԱ, 7 յունվարի: Այսօր ցերեկով 14 զինված դեռահասներ ներս խուժեցին Գեննէբերգի գործարանը, և ծառայողներին սպառնալով րէվօլվէրներով, դրամարկղից յափշտակեցին 1590 ռուբլի և փախան:

ԼԻԲԱՎԱ, 7 յունվարի: Գրօբինէվեան և Գազէնպօտեան գաւառներում ապստամբութեան, կալուածատէրերի կալուածքները աւերելու և ճանապարհները փչացնելու համար զինուորական-դաշտային դատարանի վճռով պատժվեցին 28 մարդ:

ՍՏԱՐՕԿՕՆՍՏԱՆՏԻՆՕՎ, 7 յունվարի: Կուկչինի աւանում ագրարային անկարգութիւնների գործի պատճառով ձերբակալված են 18 մարդ. Նրանք բոլորն էլ, ուժեղացրած պաշտպանութեան կանօնների հիման վրա ենթարկված են բանտարկութեան երեք ամսով:

ԼՕՆԴՕՆ, 8 յունվարի: Մինչև երեկոյեան 9 ժամ 30 րօպէն ընտրված են 255 ազատամիտներ, 35 բանւորներ, 113 ունիօնիստներ, 70 նացիօնալիստներ: Ազատամիտները շահեցին 1159 տեղ, բանւորական կուսակցութիւնը—28, ունիօնիստները —8, նացիօնալիստները մէկ:

9 յունվարի

ՄԻՆՍԿ, 8 յունվարի: Օրը կատարելապէս հանգիստ անցաւ:

ԹԷՀՐԱՆ, 8 յունվարի: Սէիստանում և Իզաբիօն շրջանում սկսվեց ժանտախտ, որ երևան հանեց Ռուսական հիւպատոսութեան բժիշկ Զապլօտնիսկի: Մահացութիւնը—99% է: Կարանտին է սահմանափակված, պատւիրված է շրջուկ, կազմված է սանիտարական յանձնաժողով:

ՎԻՏԵԲՍԿ, 8 յունվարի: Նահանգապետը արգելում է ամբողջ նահանգում ունենալ առանց Թոյլտուութեան հրազէն և ծախել առանց ոստիկանութեան վկայութեան 500 ր. տուգանքի և երեք ամսով բանտարկութեան սպառնալիքով: Տեղի են ունեցել բանւորների շատ ձերբակալութիւններ: Միջոցներ են ձեռք առնված անկարգութիւնների առաջն առնելու յունվարի 9-ին:

ԲԵԼԳՐԱԴ, 8 յունվարի: Աւստրօ-Ունգարիան փակեց սահմանը սերբիական տաւարը ներս մուծելու համար:

ԲԵՐԼԻՆ, 8 յունվարի: (Վօլֆ): Գերմանիայի բազմաթիւ քաղաքներից ստացվող հեռագիրները վկայում են, որ սօցիալ-դեմօկրատների գումարած ժողովները ամեն տեղ անցել են առանց կարգի խանգարման:

ՄՕՍԿՎԱ, 8 յունվարի: Ոստիկանութիւնը բռնել է յեղափոխականների նշանաւոր գրագրութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս տէրրօրիստների յանցաւոր մտադրութիւնների առաջն առնելուն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի: «Правительственный Вѣстникъ» լրագրում հրատարակված է խուզարկութիւնների հետևանքը դեկտեմբերի ընթացքում, որոնց ժամանակ գտնված են պայթուցիկ ռումբերի, լաբօրատօրիաների, զանազան զէնքերի նշանաւոր քանակութիւն Պետերբուրգ, Մօսկվա, Տուլա, Նիժնի, Պէնզա, Րօստով-Դօնի վրա, Եկատերինօսլավ, Օդեսսա, Նիկօլաեվ, Կիեվ, Մօգիլէվ, Դվինսկ, Վիլնա, Վարշավա և Րիգա քաղաքներում:

ԲԵԼԳՐԱԴ, 9 յունվարի: Սերբիական արտաքին գործերի մինիստրը յայտնեց աւստրօ-ունգարական դեսպանին, որ սերբիական կառավարութիւնը համաձայն չէ կատարել Աւստրօ-Ունգարիայի պահանջը, համարելով այդ անհամապատասխան իր արժանաւորութեանը:

ՎԻԼՆՕ, 9 յունվարի, Յայտարարվում է, որ գործադուլը սկսվելուց յետոյ մտցնվում է արտակարգ պաշտպանութիւն: Այն հիմնարկութիւնները, որոնք կը դադարեցնեն առևտուրը և աշխատանքը, տուգանքի կենթարկվեն մինչև երեք հազար: Տուգանքները մտնում են ի նպաստ այն առևտուր անողների աշխատաւորների, որոնք վնաս են կրել բռնուժ գործ դնողներից:

ԿՕՎՆՕ, 9 յունվարի: Նահանգապետը յայտարարում է. «Ի նկատի ունենալով կտրական հրամանը գործել մատնացոյց արված դէպքերում զէնքով—առանց նախազգուշացնելու, խնդրում եմ ազգաբնակութեանը չը հաւաքվել խմբերով փողոցներում, ծնողներին դուրս չը թողնել երեխաներին փողոց, եթէ կը սկսվեն անկարգութիւնները»:

ԿԱԶԱՆ, 9 յունվարի: Կազանի նահանգի մահմեդականների ժողովը 5 պատւիրակներ ընտրեց մահմեդականների համաժողովի համար Պետերբուրգում յունվարի 15-ին: Բոլոր պատւիրակները առաջադէմ ուղղութիւն ունեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունվարի: Քաղաքում հանգստութիւն է տիրում: «Պուլէմիօտ» երկիծաբանական Թերթի խմբագիր Շաբունէվը ձերբակալված է:

ՕԴԵՍՍԱ, 9 յունվարի: Օդէսայի գաւառում ժողովվում են շրջանային խորհուրդներ, որ պիտի քննեն կալուածատէրերին հողեր ձեռք բերելու հարցը՝ գիւղացիական բանկի միջնորդութեամբ:

ՄԻՏԱՎԱ, 9 յունվարի: Յեղափոխականները, տիրելով շրջանային կասսաները, գրաւեցին նաև հասարակական փողերը: Տրօմայի շրջանում այդպիսով անյետացաւ 8000 ռուբլի, նոյնպէս Րիգայում: Բանւորական շրջաններում խօսում են—յեղափոխական նպատակների համար բանւորներից ժողոված փողերի փչացնելու մասին:

ՄՕՍԿՎԱ, 9 յունվարի: Քաղաքում ամեն ինչ հանգիստ է, բոլորը աշխատում են: Խանութները բաց են. մանիֆէստացիաներ և ցոյցեր չեղան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունվարի: Լոյս 9-ի գիշերը գրաւած են մի շարք երկիծաբանական Թերթեր: «Стрѣла»-ի խմբագիր Կնօրօզօվսկին ձերբակալված է: Ակադէմիական ընկերակցութեան երրորդ պատգամաւորական ժողովը տեղի կունենայ յունվարի 14-ին:

ՄՕՍԿՎԱ, 9 յունվ: Ազնուականների պարագլուխների համառուսական ժողովը որոշեց միջնորդել, որ ոչ մի օրէնք չիրականանայ նախ քան Պետական Դումայի հրավիրելը: Կայսրին ուղարկված է հպատակութեան զգացմունքների մի հեռագիր. ժողովը վճռեց առանձին պատգամաւորների միջոցով միջնորդել Նորին Մեծութեան առաջ—Պետական Դումայի շուտափոյթ գումարման մասին:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 9 յունվ: Քաղաքում լիակատար հանգստութիւն է: Գործարանները աշխատում են: Շատ ձերբակալութիւններ են արված, ի թիւս որոց և ուսանողներից գտնված են զէնքերի պահեստ, դինամիտ, ռումբեր և Թռուցիկներ:

ՏՕՄՍԿ, 9 յունվարի: Գտնված է գաղտնի տպարան բազմաթիւ անլեգալ հրատարակութիւններով և մեծ քանակութեամբ զէնքերով:

ՓԱՐԻԶ, 9 յունվարի: Յունվարի 9-ի յիշատակի համար մանիֆէստացիայի առիթով «Ժուրնալ-Դէ-Դէբա» յիշեցնում է, որ յունվարի 9-ը կուսակցութիւնների կառավարութեան հետ կռւի վերջնական կէտն էր անկարգութիւնների, բռնութիւնների և համագումարների միջոցով: Կռիւը վերջացաւ պարտութեամբ: Սօցիալիստների առաջնորդները խոստովանում են այժմ, որ անհրաժեշտ է մասնակցութիւն ունենալու Դումայի ընտրութիւնների մէջ: Տօնելով յունվարի 9-ը նրանք տօնում են իրանց պարտութիւնը: Ներկայում կառավարութիւնը յենվում է չափաւոր—լիբերալների և զօրքի վրա, որը մնաց նրան հաւատարիմ: Կարգը և ներքին խաղաղութիւնը անհրաժեշտ են րէֆօրմների իրականացման համար:

ՍՕՖԻԱ, 2 յունվ.: Ցօնչէվը յայտնեց իր կողմնակիցներին, որ վերջնականապէս Թողնում է մակեդօնական կազմակերպութիւնը, մտադրվելով վերադառնալ իսկական ծառայութեան:

ԱԼԺԷՍԻՐԱՍ, 9 յունվ. (Հաւաս), Ենթադրում են յունվարի 9-ին կօնֆէրէնցիայի պաշտօնական ժողովում կընդունվի կօնտրաբանտ զէնքի ներմուծման արգելքի նախագիծը:

ԻՐԿՈՒՏՍԿ, 9 յունվ.: Կատարվում են ձերբակալութիւններ: Այսօր տեղի ունենալիք գործադուլը չեղաւ:

ՐԻԳԱ, 9 յունվարի: Ընդհանուր գործադուլը չեղաւ: Ելէքտրաքարշը, կառքերը և երկաթուղային արհեստանոցներն աշխատում են: Լրագիրները լոյս կը տեսնեն: Խանութները և բանկերը բաց են: Դրութիւնը հանգիստ է. փողոցներում կանգնած են զօրքերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունվարի: Քաղաքում հանգիստ է: Տպարանները և գործարաններից ու գավօդներից շատերը չեն աշխատում: Այն լուրը, որ քաղաքապետը հրամայել էր Թատրօնների փակման երկիւղով՝—ներկայացում տալ յունվարի 9-ին—ճիշտ չէ:

ՄԻՏԱՎԱ, 9 յունվ.: Կատարելով սպանութիւնը, ագիտատօր Եակօբսօնը փախաւ Վինտաւայից ձիերով մինչև մօտակայ կայարանը, բայց այդտեղ բռնվեց ժանդարմներից: Օգտվելով մթութիւնից Եակօբսօնը, նստելով վագօն, փախաւ, բայց պատահելով դրագունեան վաշտին, սպանվեց:

ՍՄՕԼԵՆՍԿ, 9 յունվ.: Խուզարկութիւն է կատարված սօցիալ-դէմօկրատների ժողովարանում: Ձերբակալված են 140 մարդ:

ՍՈՒԽԴԺԱՆ, 9 յունվ.: Ամբոխը հաւաքվում է հրապարակում: Սպասվում է նահանգապետի գալուստը դրագունների հետ:

ՕՊԱՏՕՎ, 9 յունվ.: Կատարվում են խուզարկութիւններ և ձերբակալութիւններ: Գլխաւոր յեղափոխականները փախել են. բնակչութիւնը հանգստանում է: Հարկերը արագութեամբ մտնում են և առևտրի վկայականները վերցնվում են:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴՐՆ-ԲԺԻՇԿ ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԴԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Պ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և ելեքտրօ-բուժութիւն:
Պ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԵՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Պ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
(չ.ու.փ.) 28—100

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ռուսերէնից հայերէն
Լոյս տեսաւ ՈՒԹԵՐՈՐԴ պրակը,
Գինը 1 ր. 20 կոպ.
Ամբողջ բառարանի բաժանորդագինն է 7 ր., ճանապարհածախսով 8 ռուբլի, Փառակազմ 9 ր.: Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում: Դիմել հեղինակին հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել «Գուտենբէրգ» գրախանութում:
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
հայերէնից ռուսերէն
Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ պրակը: Գինը 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանի բաժանորդների համար 4 ր. Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն:
Բաժանորդագինը 2 ր. 50 կ.:
Դիմել հեղինակին վերոյիշեալ հասցէով:

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, յունվարի 15-ին, 1906 Թւին, ցերեկվայ ժամը 11-ին, նշանակված է տարեկան ընդհանուր ժողով պ.պ. անդամների, ընտրելու աւագներ և վերաքննիչ յանձնաժողովի անդամներ, նոյնպէս և քննելու և հաստատելու 1905 Թւի հաշիւը և 1906-ի նախահաշիւը: Դրանից յետոյ ժամը 3-ին կը կայանայ ճաշ անդամների և կանդիդատների համար—1 ր. 40 կոպէկ վճարով ամեն մի անձից, առանց գինու: (12,14,15) 1—3

Մի հայ երիտասարդ խնդրում է պաշտօն ուսուցչի, հաշուապահի գանձապահի և այլ յարմար գործեր. կարող է գնալ և ուրիշ քաղաք կամ գիւղ: Դիմել՝ «Մշակի» խմբագրատանը: Վարել է երկար ժամանակ հաշուապահի պաշտօն և ունի վկայականներ: 1—2

ՄԻ ԶԻՆԻՈՐ
որը աւարտել է զինուորագրութիւնը հեծելազօրքի գնդում, ուզում է հարմար ծառայութիւն գիտէ ռուսերէն, հայերէն, վրացերէն և Թուրքերէն: Մօսկօվսկի փողոց, տուն Տուսիեվի: Հարցնել խանութում Տէր-Գրիգորեանին: 1—2

„ՀՈՎԻՒ"
Հոգևոր-բարոյական, պատմական, հասարակական և մանկավարժական շաբաթաթերթը 1905 թ. յունվարից կը հրատարակվի շաբաթը մի անգամ, կիրակի օրը, հետևեալ ծրագրով: 1. «Պետական կարգադրութիւններ»: (Հայոց եկեղեցու և դպրոցների վերաբերեալ): 2. «Հոգևոր իշխանութեան կարգադրութիւններ»: (Վանքերի, եկեղեցիների, եկեղեցականների, դպրոցների և ծխական համայնքների ամեն տեսակ հոգևոր գործերի վերաբերեալ): 3. «Համառօտ տեղեկութիւններ այլադաւան եկեղեցիների հոգևոր իշխանութեան կարգադրութիւնների մասին»: (Վերաբերեալ իրանց եկեղեցիների և ժողովրդի): 4. «Համառօտ կենսագրութիւններ»: (Քրիստոնէական եկեղեցու արժանաւոր և ճշմարիտ հովիւների և ուսուցչական ասպարիզում գործող յայտնի—մանկավարժների): 5. «Առաջնորդողներ»: (Կրօնական, բարոյական-խրատական և ծխական-եկեղեցական զանազան խնդիրների վերաբերեալ): 6. «Պատմական տեսութիւն անցեալ և ներկայ Հայոց եկեղեցու և ժողովրդի մասին»: (Քննական ուսումնասիրական, տեղագրական և ճանապարհորդական): 7. «Եկեղեցական իրաւաբանութիւն»: (Յօդուածներ եկեղեցական իրաւաբանական խնդիրների վերաբերեալ): 8. «Եկեղեցական բարեկարգութիւն»: (Եկեղեցական կարգապահութեան, իրաւունքի և պարտականութեան, պարգևաբաշխութեան և պատժի, այլև կանոնաւոր և ներդաշնակ երգեցողութեան վերաբերեալ յօդուածներ): 9. «Մամուլի տեսութիւն»: (Կրօն., եկեղեցական և դպրոցական խնդիրների վերաբերեալ): 10. «Մանկավարժական»: (Դպրոցական կեանքի, ծրագրների և դաստիարակութեան եղանակի վերաբերեալ): 11. «Հաշուետւութիւն»: (Վանական, եկեղեցական և դպրոցական կալուածների, հաստատութիւնների մուտ և ծախուց և նրանց կառավարիչների գործունէութեան մասին): 12. «Այլևայլք»: (Մանր լուրեր, եկեղեցական և դպրոցական տօների և հանդէսների համառօտ նկարագրութիւններ և խմբագրութեան պատասխաններ և այլն): 13. «Նկարներ»: (Վանքերի, եկեղեցիների, ուսումնարանների և պատկերների նշանաւոր գործիչ կանների և մանկավարժների): 14. «Յայտարարութիւններ»:
Ծանօթ. Իւրաքանչիւր №-ը կը հրատարակվի ութ մեծադիր թերթից (16 երես) բաղկացած: Բաժանորդագինը 4 ռուբլի, կէս տարվանը 2 ր.—50 կոպէկ: Արտասահմանի համար 15 ֆրանկ:
Հասցէն. Редакція еженедѣльнаго журнала «ОВИВЪ» կամ Rèdaction «HOVIVE» Tiflis-Caucase-Russie.
Խմբագիր—հրատարակիչ՝ Եզնիկ ա. ք. Երզնկեան:
3—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՍԱՓՐԻՉ"
Իւմօր-Սատիրական-պատկերազարդ հանրամատչելի հանդէս, որ լոյս պիտի տեսնի Ս.-Պետերբուրգում 1906 թ. սկզբներին հայ և ռուս լեզուներով:
«Սափրիչը» պիտի պարունակէ իր մէջ:—1) Ֆէլիետօններ, 2) Վարչական և առօրեայ կեանքի մասին տեղեկութիւններ. 3) Լուրեր, նամակներ և հեռագիրներ Սաթանէլեան անդրգերեզմանային գործակալութիւնից. 4) Առանձին բաժին հանդէսների հանդէս. 5) Իւմօրիստական յայտարարութիւններ և 6) Սովորական յայտարարութիւններ:
«Սափրիչի» ամեն մի համարում բացի տեկստից զետեղված կը լինի 8—15-ի չափ և գունաւոր-սատիրական նկարներ:
«Սափրիչ»-ի բաժանորդները կը ստանան երկու պրէմիա ֆոտոտիպ երկու գոյնով—հայկական կեանքից:
«Սափրիչ»-ի խմբագրութեան գլուխ անցած են գործին տեղեակ մասնագէտ անձեր և բարձրագոյն դպրոցի ուսանողներ:
«Սափրիչ»-ի բաժանորդագինն է տարեկան 2 ռուբլի ճանապարհածախսով ու պրէմիայով. առանձին համարները 15 կ.:
Խմբագրութեան ժամանակաւոր հասցէ:—С.-Петербургъ Казанская 46. Д. Окроянцу.
1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՅԱՌԱՋ"
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,
Խմբագրութեան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յոնան, Թոփչեան Եղիշէ՝ Խաժակ Գ., Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Իւսուփեան Յովհաննէս:
Մօտիկ աշխատակիցներն են. Բժ. Աթաբէգեան Լևոն, Ա.—Դօ, Զարդարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Զաւարեան Սիմէօն, Թումանեան Յովհաննէս, Իսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցեան Ստեփան, Մալումեան Խաչատուր, Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, Շխեան Սիմէօն, Պապովեան Ալէք., Սամուէլեան Խաչ., Տիգրանեան Սիրական, բժ. Օհանեա, Քրիստ. և ուրիշները:
ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է
Թիֆլիսում՝ տարեկան 6 ր., ամսական 50 կոպ.: Թիֆլիսից դուրս՝ տարեկան 7 ր., ամսական 60 կոպ.: Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.:
Դիմել՝ Тифлисъ, редакція «Арачъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Haradj».
Խմբագրատունը գտնվում է Թիֆլիսում, Սերգիեվսկայեա փողոց № 9:
Խմբագիր—Ա. Սահակեան
Հրատարակիչ—Մ. Նալբանդեան
3—3

„Գուտտենբերգ" գրախանութում վաճառվում են

«Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», Մ. Եկմալեանի	10 ռ.—
«Ներդաշնակեալ Երգեցողութիւնք Ս. Պատ.» արական բարձր ձայն (Tenore)	9 »—
» » » արական բարձր ձայն (Basso)	3 »—
» » » իգական խոնարհ ձայն (Alto)	2 »—
» » » իգական բարձր ձայն (Soprano)	2 »—
«Թուաբանական խնդիրներ» Երզնկեանի ա. և բ. մասերը միասին	—30 կ.
» » » գ. մաս	—35 »
«Շիրակ» օրացոյց Աբէնեանի պատի	—60 »
» » » ծոցի	—20 »
Սիմէօնեան «Դասագիրք աշխարհագրութեան» ա. տարի նախագիտելիք	—35 »
» » » դ. տարի մասն քաղաքական	—60 »
» «Դասագիրք Թուաբանութեան»	—65 »
«Բնագիտութիւն» (կենդանաբ. հանքաբան. և բուսաբան.) Զ. Գրիգորեանի	—60 »
«Բնախօսութիւն», Վօսթէրի, Թարգմ. Գ. քահ. Երզնկեանի	—30 »
» Թարգմ. Արշակ Ազատեանի	—20 »
«Տրամաբանութիւն» Ի. Յարութիւնեանի	1 —
«Բանահիւսութիւն տնտեսութեան» Ճազարբէգեանի	60— »
Դաստիարակման խորհուրդներ» Գ. քահ. Երզնկեանի	30— »
«Ընդհանուր աշխարհագրութիւն» ուսումն. և բնական աշխ. Գ. ք. Տէր-Գաբրիէլեան	30— »
«Դասագիրք կրօնի», ա. տարի, Ս. քահ. Տէր-Յովհաննիսեանի	20— »

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ", Д. Галустяну. 176 2—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ"
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ
Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ:
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին:
Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է:
Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» Թղթակիցներն ու կենդանի ուժերն են լինելու:
«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ:
«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական Թղթակիցներին:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 ռուբ. —	Արտասահմանի համար տարեկան 5 ռուբ. —
կէս տարին 2 » —	կէս տարին 2 » 50 կ.
ամիսը — — 40 կ.	ամիսը — — 50 »
հատով №-ը — — 10 »	հատով №-ը — — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 ռուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 ռուբլի.
1906 Թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից:
«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ:
Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ", Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.
Խմբագիր-հրատարակիչ՝ Աւոս Աբրահամեան
(ե. ո.) 3—12

Տպարան «ՀԵՐՄԷՍ» [illegible]
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.